



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

83

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

Բացում 1876 Ամին

ՆԻՍՏԻ

11 ՄԱՐՏ 1877



ՂԱԼԱԹԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԼՐԱԳՐՈՑ

1877

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան Արարանեան	Փաշա	Ա.	Ատենապետ
Տիգրան Երսուֆեան	Հֆէնտի	Գ.	.
Կարսեյին Յ. Մելիքեան	.	Ա.	Ատենապետ
Համարձուժ Ս. Արամանեան	.	Բ.	.
Առաքել Ալթունեան	.	Գ.	.

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Յովհաննէս Ք. Մկրեան		Ատենապետ
Տ. Կրիզոստ. Ք. Աճէմեան		
Սարգիս Աղարէկեան	Հֆէնտի	

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Նուրեան	Հֆէնտի	Ատենապետ
Քէրիզ Ստեփանեան	.	
Պոլոս Պառնասեան	.	

ԿԱԼՈՒԱԾՈՅ ԴԻԻԱՆ

Յակոբ Քաղապետ	Հֆէնտի	Ատենապետ
Յովհաննէս Ազնաւորեան	.	
Ստեփան Պէլիկանեան	.	

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տիգրան Երսուֆեան	Հֆէնտի	Ատենապետ
Սթսէն Խոճասարեան	.	
Նազարէթ Շահապետեան	.	

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յարութիւն Մէրեճի—Գուլի	Հֆէնտի	Ատենապետ
Համարձուժ Մազպուլեան	.	
Եղիազար Մելիքեան	.	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Տ. Ներսէս վարդապետ Արարանեան		Ատենապետ
Կարապետ Շահապետեան	Հֆէնտի	
Նան Քաղապետ	.	

ՆԱԽԱԶԵՌՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Միքայէլ Մամիկոնեան	Հֆէնտի	
Առաքել Ալթունեան	.	

ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Իւթիւնեան	Հֆէնտի	Ատենապետ
Ստեփան Փափապետ	.	

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Տեղեկագիր Գործարարութեան դեմքէն ի վերայ գործարարութեան ինքրոյն .
 Բ. վերահանութեան Սահմանադրութեան . շարունակութեան վերահանութեան յօդուածոյ
 Թւումըն հարկարարութեան , յերկրորդ ընթացքին :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

Ատենայնք բացուեցաւ ժամն 7 ին ՚ի ներկայութեան 41 երեսօտիսանաց , որոց վերջին թիւը յանդեցաւ 57 ՚ի :

Ամենապատիւ Ս. Պատրիարք Հօր բացակայութեան պատճառաւ նախ Տ. Մատթէոս սրբազան , և անոր մեկնելէն վերջը Տ. Խորէն Նարայէյ սրբազան որ քիչ ետքը եկաւ , հրաւիրուեցաւ նախագահել ժողովին առժամեայ :

Այս միջոցին Փոխանորդ Մկրեան Տէր Հայրը Սրբազան Պատրիարք Հօր կողմէ առ ինքն ուղղեալ մէկ նամակը յանձնեց Ատենապետ փառային , որ անմիջապէս կարդաց զայն . որոյ պատճէնն է .

Տէր Փոխանորդ .

Մեծապատիւ Աղայէկեան Յովհաննէս Հֆէնտի ազգային երեսօտիսանն առ Աստուած փոխեր է յայտն զիչերի , և յուղարկուորութեան հանդէսը այսօր ՚ի ժամ ութ պիտի կատարուի յՕրթագեղ : Հանդուցելոյն բարեմասնութիւններն և

ազգային ու ընտանեկան առաքինութիւններն իրբն նշանաւոր ազգայնոյ և իրբն պատուական և ազգասէր երեսօտիսանի նորա յիշատակը պատուել նրա յարակաւ պարտք կը դնեն մեր ամենուս վրայ . ուստի ՚ի բանալ ժողովոյն կամ նախ քան զժողովն ընդհանուր վսեմափայլ առննապետին և երեսօտիսանաց զեկուցէք այս ցաւալի մահը . կը յուսամ որ չեն վարանիլ շուք դնել նորա ազնուութեան յուղարկուորութեան հանդէսին : Ես անձամբ տկար լինելով իմ կողմանէս բարեհաճեցէք խնդրել Գեր. Տէր Մատթէոս սրբազան եղբորէն որ բարեհաճի անձամբ երթալ և նախագահել հանդիսին :

Ձեզ ամենեցուն բարեբաւտ կեանք մաղթելով , մնամ ընդ միջս աղօթանուէր առ Աստուած

1877 մարտ 11
 Բերա
 ՆԵՐՍԷՍ
 Իքր. Պատր. Կ. Պօլոս
 ԱՏԵՆԱԿԵՏ ՓԱՇՄ. — Իմացաք այն ազգայի լուրն , որ մեր ընկերներէն բարե-

բարոյ և ազգասէր Աղայէկեան Յօհաննէս էֆէնտիին առ Աստուած փոխելուն առթիւ կը հասնի մեզ այս ժամուս : Արքայան Պատրիարք հօր հրամանին համեմատ Տ. Մատթէոս սրբազան բնականաբար պարտի երթալ նախագահել յուղարկաւորութեան հանդիսին . անշուշտ մեր ընկերներէն ալ ներկայ գտնուիլ ուզողներ պիտի ըլլան . սակայն ես կառաջարկեմ որ մեր մէջէն պատգամաւորութիւն մ'ընարենք որ Մատթէոս սրբազանին հետ երթայ պաշտօնապէս ներկայացնել Ազգային ժողովս այն տխուր հանդիսին մէջ :

ԵՌԻՍՏՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Արդէն Աղայէկեան էֆէնտիին շատերնուս բարեկամն էր ոչ միայն իր երեսփոխան , այլ և երեսփոխանական պաշտօնի մտնելէն առաջ ալ շատեր գինք ճանչցած են . երբ նա այս միջոցին 'ի գերեզման պիտի իջնէ , ներելի չէ կարծեմ եթէ մեք հոս մեր գործերովն զբաղինք անտարբեր : Այս ժողովը չվարանեցաւ իր մէջէն որ և է մէկ ընկերին պակասած ատեն՝ անոր յուղարկաւորութեանը ներկայ գտնուելու . այսօր ալ ճիշդ ժողովին բացման ժամուն մեր ընկերներէն միոյն յուղարկաւորութիւնը կը պատահի . այս պարագան կը պարտաւորէ մեր գործերն՝ որչափ ալ ստիպողական ըլլան՝ թողուլ այսօր 'ի պատիւ մեր այն ընկերին՝ որ 'ի գերեզման կիջնէ : Աւտի կառաջարկեմ որ ժողովն իւր այսօրուան նիստն անմիջապէս փակելով առաջիկայ ուրբաթին ձգէ , որպէս զի երեսփոխաններէն ով որ կը փափաքի՝ կարող լինի յուղարկաւորութեան հանդիսին ներկայ գտնուիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անշուշտ մեր հանգուցեալ ընկերին յուղարկաւորութեան գնացողներ պիտի ըլլան երեսփոխաններէն . սակայն ասոնք թէ և բազմաթիւ ըլլան , դարձեալ չեն ներկայացուներ զԱզգային ժողովս , ուստի պատգամաւորութիւն մ'ընտրել առաջարկեցի որ երթայ 'ի դիմաց ժողովոյն շուք դրնէ հանդիսին , ինչպէս որ Արքայան Նախա-

գահնիս ալ մեզ կը պատուիրէ : Այսու հանդերձ դարձեալ ամեն որ ազատ է և կրնայ երթալ յուղարկաւորութեան ներկայ գտնուելու :

ԵՌԻՍՏՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Ատենապետ փառային առաջարկութիւնը պատգամաւորութեան մասին սխալ ըմբռնած էի . հիմա քանի որ իւր տուած վերջին բացատրութեամբ խնդիրը պարզուեցաւ , ետ կառնում իմ առաջարկութիւնս :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Աղայէկեան էֆէնտի մահուան համար ամենքս ալ կը ցաւինք , որովհետեւ մեր ամենէն պատւական և բարի ընկերներէն մէկն էր . բայց նորա յուղարկաւորութեան ներկայանալու պատճառաւ այսօրուան նիստերնիս չենք կրնար փակել : Երեսփոխան էֆէնտիին էր ասի առաջարկողը , բայց նա ես առաւ իւր առաջարկութիւնը : Կը մնայ ինձ այս առթիւ կէտ մը միայն յիշեցնել զիւանին . մեք հանգուցեալ երեսփոխան մ'ալ ունինք , այն է Այվատեան Մատթէոս էֆէնտիին , որ մեր գործունեայ ընկերներէն մէկն էր , և որոյ մահը ցայսօր անյիշատակ թողուած է այս ժողովէն : Կառաջարկեմ որ անոր յիշատակին համար ալ քանի մը խօսք ըսուի , որպէս զի պատմութեան առջև միոյն աշատութիւն և միւսոյն բացատրութիւն ըրած չհամարուիմք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Եթէ ես մեռնիմ , չեմ ուզեր որ իմ յուղարկաւորութեան պատճառաւ ժողովին նիստը փակուի . թոյլ տուք մեռելոց թաղել զմեռեալս . մեք պէտք է այսօրուան նիստերնիս շարունակենք . Աղայէկեան էֆէնտի յուղարկաւորութիւնը վաղուան ալ կրնայ մնալ՝ թէ որ կուզենք պատուել անոր յիշատակը՝ ներկայ գտնուելով :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դիւանն Աղայէկեան էֆէնտի մահուան առթիւ իւր պարտքը կատարել ջանաց , և պատրաստ է միշտ իւր ընկերաց յիշատակը յարգել : Իսկ Այվատեան էֆէնտի յիշատակին գալով , ստոյգ է որ նա ալ երեսփոխա-

նացս շարքին մէջ նշանակուած էր , բայց ես երկու տարի է որ չտեսայ գինքը ժողովիս մէջ , վասն զի իր երեսփոխանութիւնն հրաժարագրոյ մը առթիւ առկախեալ մնացած էր . այսու ամենայնիւ թէ որ ժողովն ուզէ , անոր ալ յիշատակութիւնը կրնայ ըլլալ յատենի սատ պաշտօնապէս : Հիմա օրուան խնդրոյն գառնալով Աղայէկեան էֆէնտի յուղարկաւորութեան հանդիսին շուք դնելու համար , ինչպէս որ Արքայան Պատրիարքը մեզ կը ներշնչէ , կարծիք մը կայ խմբովին երթալ գտնուիլ , և այս պատճառաւ այսօրուան նիստերնիս փակել . կարծիք մ'ալ կայ՝ առանց ժողովն ընդմիջելու թողուլ որ ամեն ուղղող երթան հանդիսին ներկայ գտնուելու , և պատգամաւորութիւն մ'ալ որոշել որ Մատթէոս Արքայանին հետ երթայ պաշտօնապէս ժողովս ներկայացնել : Այս երկուքէն ո՛րն ընդունուելիքը գիտնալու համար ձեր քուէին դիմել կը պարտաւորիմ :

Ժողովը 21 քուէով ընդդէմ 19ի պատգամաւորութեան մը երթալն ընդունելով , որոշեց շարունակել իւր նիստը :

Ատենապետ փառային ժողովին հաճութեամբ հրաւիրեց

- Յակոբ էֆէնտի Նորատունկեան
- Տիգրան » Երեսփոխան
- Յովհաննէս » Ազնաւորեան

իրրև պատգամաւոր 'ի դիմաց ժողովին ընկերակցիլ Մատթէոս Արքայանին ներկայ գտնուելու հանգուցելոյն յուղարկաւորութեան , յայտ առնելով միանգամայն թէ երեսփոխաններէն եթէ ուրիշ փափաքողներ ալ կան՝ ազատ են երթալ :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Պատրաստ եմ երթալ Արքայան Պատրիարք Հօր հրամանը կատարելու համար . բայց մեկնելէ առաջ կը խնդրեմ որ թոյլ տաք ինձ երկու խօսք նուիրել հանգուցեալ Այվատեան էֆէնտի յիշատակին . թոյլ տաք ինձ պարտաւորութիւն մը կատարել և մեր սուգը կրկին ընել Այվատեան էֆէնտի յիշատակը պատուելով . Այվատեան է-

ֆէնտի երեսփոխանական պաշտօնին առկախ մնալն առանց պատճառի չէր . նա պատճառարանեալ հրաժարական մը մատուցած էր , որ յանձնուեցաւ Արքայութեան քննութեանը , սակայն քննութիւնն անկատար մնալով՝ չկրցաւ նա շարունակել իւր պաշտօնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մատթէոս Արքայան մեկնելէ առաջ երկու խօսք ընել կուզէ Այվատեան էֆէնտի յիշատակը պատուելու համար . Դիւանը չկրնար խօսքը զլանալ նա այսպիսի պարագայի մը մէջ , վստահ ըլլալով միանգամայն որ Արքայանն իր դամբանականը ճօնացնելով չ'զտացներ առաւել մեր սրտերը որ կրկնակի վիրաւորեալ են :

Չայս ըսելով Ատենապետ փառային հրաւիրեց Մատթէոս Արքայանն 'ի բեմ :

Սոյն պահուն վերոյիշատակեալ պատգամաւորք և ուրիշ երեսփոխանք ոմանք մեկնեցան ժողովարանէն :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ. — Երեսփոխան տեա՛րք . ազգային երեսփոխան և Արարատ լրագրոյ խմբագիր Այվատեան Մատթէոս էֆէնտի տարածամ մահն արդէն անցեալ դեկտեմբեր 14ի առաւօտուն ազգին դուժեցաւ . այսօր ալ կը դուժի Ազգային ժողովիս մէջ իմ միջոցաւ :

Տարարագր Այվատեան ազգային պարտք մը կատարած ըլլալով սխալ մեկնուեցաւ և շարաշար գանակոծուելով՝ երկամեայ հիւանդութենէ ետք հանգուեալ 'ի Տէր : Սորա մահը կը յուսանք թէ ինքնակամ կառավարութեան վերջին զօհը կըլլայ :

Այվատեանի յուղարկաւորութեան հանդէսը պատուեցաւ խիստ բազմաթիւ ուղեկիցներէ , և Ատենապատիւ Արքայան Պատրիարք հայրն իր սքանչելի դամբանականին մէջ իրաւամբ անուանեց զնա « ճամբարութեան , սիրոյ և արդարութեան նահատակ » :

Տարակոյս չունիմ , երեսփոխան տեա՛րք , թէ դուք ևս մի և նոյն զգացումը կը կրէք Այվատեանի մահուան ցաւալի հանգա-

մանաց վրայ : Հարկ չէ ըսել թէ կորու-
 վածիսն Այվատեան՝ իր կեանքը մեծ մա-
 սամբ ազգային ծառայութեանց նուիրած
 էր, իբրև դաստիարակ, իբրև խմբագիր,
 իբրև Թաղական խորհրդոյ անդամ և իբ-
 րև երեսփոխան : Նորա սկզբունքն էր
 պաշտպանել ազգային շահերը և դաւա-
 նիլ թէ Հայ ազգն ունի այնպիսի մաս-
 նաւոր շահեր, որոնք չեն կրնար երբէք
 համաձայնիլ օտար շահերու հետ : Ազ-
 գային ժողովիս ատենագրութեանց մէջ
 իր ատենարանութիւնք կը կենան, մի և
 նոյն ուղղութեամբ և հաստատամտու-
 թեամբ փայլած է և մանաւանդ աւելի
 փայլած է կաթուղիկոսական խնդրոց մէջ-
 զի կը դաւանէր թէ Ազգին միութեան և
 գորութեան կեդրոնն է Ս. Էջմիածնի մայր
 աթոռը : Ճշմարիտ սահմանադրական մ էր,
 և Սահմանադրութեան վերաքննիչ յանձ-
 նաժողովոյ անդամ և ատենագրութեան, նոյն
 իսկ տեղեկարբերն էր, բացատրելու հա-
 մար թէ շատ քիչ բան կայ վերաքննելի
 նորա մէջ, և եթէ կարելի է համոզել ըզ-
 մեզ թէ՛ բնաւ չկայ : Ազգային ժողովիս
 գոյութիւնն ու յարատեւութիւնը հարկա-
 ւոր երաշխաւորութիւն կը համարէր սահ-
 մանադրական կանոնաւոր ընթացից և
 ազգային յառաջադիմութեան, ուստի և
 անոր վրայ մեծ էին իւր գուրգուրանքն՝
 որք ծանօթ են արդէն Ազգային ժողովիս :
 Այվատեան մեռաւ չորս որր և ղե-
 սափթիթ դաւակ և այրի կին մը թողլով-
 մեռաւ աղքատ և պարտուց տակ, զոր
 չէր յայտնէր իւր կենդանութեանը : Ազ-
 գին կը մնայ ազգային աշխատաւորի մը
 դաւակները խնամել, որ քաջալերութիւն
 մ'է ուրիշ աշխատաւորներ յարուցանե-
 լու : Եւ ես կը կնքեմ Այվատեանի պատ-
 ւաւոր յիշատակին համար իմ այս գուր-
 նաքեայ ատենարանութիւնս, յայտարա-
 րելով թէ՛ Այվատեան Մատթէոս իր ազ-
 գային պարտքը կատարած ըլլալով, ի-
 բրաւունք ստացած է Ազգային երեսփո-
 խանական ժողովիս գովասանաց քուէին,
 զոր կը յուսամ թէ ժողովս յոսն երևե-
 լով կը հոշակէ և կաւանդէ պատմութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ահաւասիկ այս
 պարագային մէջ մեր երկու կորուսեալ
 ընկերաց՝ Աղայէկեան և Այվատեան է-
 ֆէնտիներուն համար կը հրաւիրեմ երես-
 փոխան էֆէնտիներն իրենց ցաւը յայտ-
 նել յոսն կանգնելով :

Երեսփոխանը միահամուռ ոտքի ելնե-
 լով ցաւագնութիւն յայտնեցին :

4.

Բաց-խոսք-ընթաց

Ատենագրութեան ատենական տկա-
 րութեան պատճառաւ բացակայ գտնուող
 մի քանի երեսփոխանաց անունները թը-
 ւելէ ետեւ, որք են՝

- Տ. Հմայեակ վրդպ. Դիմաքսեան
- Տ. Սահակ քհնյ. Տ. Սարգսեան
- Սարգիս էֆէնտի Աղարէկեան
- Գրիգոր Սարկոսեան

Նշանակել տուաւ ներկայութեան տուժա-
 րին մէջ :

2.

Խնդիր նախ-ընթաց 3 նոր-ընթաց-ընթաց

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ատենագրու-
 թեանց խնդիրն՝ ինչպէս կը յիշէ ժողովն,
 նախորդ նստին մէջ յուզուեցաւ և այս
 նստին որոշման մնաց : Իւթիւճեան էֆէն-
 տիի հետ եղած պայմանագիրն ուղեցինք
 տեսնել հասկնալու համար թէ ինչպէս
 պայմանուած է ատենագրութիւնները
 տպել և ժամանակին երեսփոխանաց ձեռ-
 քը հասցնելու կէտն : Գնացի անձամբ իւ-
 թիւճեան էֆէնտիի գրասենեակը և տե-
 սայ սրայմանագիրն՝ որ ճիշդ նոյնն էր ինչ
 որ մէկ քանի ամիս առաջ ցոյց տրուած
 էր Գիւանին, և Վարչութեան Տնտես-
 խորհրդոյ ղիւանի ստորագրութիւնը կը
 կրէր : Անոր մէջ յիշուած է յատկապէս
 թէ յաջորդ նստէն 24 ժամ առաջ պիտի
 հասնի ատենագրութիւնը, բայց ոչ թէ
 ցրուելու՝ այլ ՚ի վաճառ հանելու համար :
 տեսնելով որ այս կէտը չէր պատասխա-
 նէր ճշգիւ մեր կանոնին արամագրու-

թեան, որ կը պահանջէ նիստէն գե'թ 24
 ժամ առաջ ատենագրութիւնը տպելու և
 բեափոխանաց ձեռքը հասցնել, անմիջա-
 պէս գրեցի Տնտես. խորհրդոյ Ատենա-
 պետին, որ եթէ կարելի է սրբագրելով
 պայմանագրին այն կէտը՝ 24 ժամը 48 ի
 վերածէ, և ամեն անգամ տպելու ատե-
 նագրութեանն երեսփոխանաց թուով
 տպագրիչէն ծախու առնելով Ատենագրի
 էֆէնտիին յանձնել տայ, որպէս զի նա
 ալ կարող ըլլայ գոնէ 24 ժամ առաջ
 ցրուել տալ երեսփոխանաց : Եւ որպէս
 զի ոչ միայն Ազգային ժողովն, այլ և
 կեդրոնական սնտուկը գոհ ըլլայ, առա-
 ջարկեցի որ երեսփոխաններէն հաւաքուի
 մէն մի ատենագրութեան տպագրութեան
 ծախքը՝ մէկ կամ աւելի օրինակի համար
 ըստ հաճոյից ՚ի նպատակ Ազգ. սնտուկին.
 և եթէ այս կերպով ծախքը ամբողջապէս
 չգոցուի, մնացորդը ղիւանական ծախուց
 վրայ յաւելնայ, որով ամսական փոքրիկ
 զոհողութեան մը շնորհիւ երեսփոխանաց
 ամենուն գոհունակութիւնը կը շահուի և
 Ազգ. ժողովոյ ղիւանի վրայէն ատենագ-
 րութեան խնդիրը միանգամ ընդ միշտ
 կը վերնայ : Այս ամենը նամակաւ իմաց
 տուի նաև մեր Ատենագրի էֆէնտիին,
 որ դժբաղդարար նամակս մինչև այս
 վայրկեան չստանալով, այս անգամին
 համար չէ կրցեր ուշադրութեան առնուլ
 և գործադրութեան գնել. սակայն հիմա
 Տնտես. խորհրդոյ Ատենագրութեան ինձ յայտ-
 նեց թէ առաջարկութիւնս ընդունուած
 է խորհրդին մէջ և պիտի գործադրուի
 յետ այսորիկ :

Այս վերջին 3 ատենագրութիւններէն
 երկուք ունինք տպելու և պատրաստ վա-
 ւերացման համար. վերջինն ալ կիսով չափ
 տպելու է, բայց ձեռագիրն ամբողջ աստ
 է. թէ որ ժողովը կուզէ, երկու տպելու-
 ները վաւերացնենք. եթէ ոչ՝ ամենը մէ-
 կէն ձգենք յառաջիկայ նիստին վաւե-
 րացման :

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛.
 յառաջիկայ նստին թող մնայ, վասն զի

ատենագրութիւնները, թէև տպելու, ձեռ-
 քերնիս չհասան :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն կանց-
 նինք ատենական ուրիշ գործողութեանց :

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Իմ հասկեցա-
 ցըս ա՛յս է. ատենագրութիւնները 24
 ժամ առաջ պիտի ստանանք. ուղղը ծախ-
 քը պիտի տայ իբրև նուէր. այսպէ՛ս է
 Ատենագրութեան փաշա :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսի թէ առա-
 ջարկութիւնս ընդունուած է Տնտես. խոր-
 հրդէն. այսօրուան ատենագրութիւնով
 չորս ատենագրութիւն պիտի ունենանք
 յառաջիկայ նստին տպելու և պատրաստ
 ամենուն ձեռքը : Ես կրնամ հաւատարմ
 ձեզ թէ Տնտես. խորհուրդն և Ատենա-
 գրութեան էֆէնտիին իրենց պարտաւորու-
 թիւնը պիտի կատարեն և կատարելա-
 րելապէս գոհ պիտի ընեն կանոնագրու-
 թիւնն և երեսփոխանութիւնը, ինչպէս որ
 խոստացան ինձ : Անցնինք ուրիշ գործո-
 ղութեանց : Այսօր խել մը գրութիւններ
 ունինք, նախ զանոնք պէտք է կարդանք :

3.

Գրուած-ընթաց-ընթաց 50 երես-ընթաց

Ատենագրութեան ատենական տկա-
 րութեան պատճառաւ ատենագրութիւնն,
 որ 50 երեսփոխանաց կողմէ մատուցուած էր :

Մեծապատիւ Ատենագրի էֆէնտի
 Ազգային ժողովոյ .

Ստորագրելու երեսփոխանքս Ազգային
 ժողովոյ այսօրուան նստին մէջ Օ. Խօճա-
 սարեան էֆ. երեսփոխանին գէմ տրուած
 յանդիմանութեան քուէին մասնակցողնե-
 րէն ըլլալով, կաղաչեմք որ մեր յիշեալ
 մասնակցութիւնն ատենագրութեան մէջ
 յանուանէ նշանակուի :

25 փետրվար 1877

- | | |
|----------------|--------------|
| Յ. Մերեթե-Գոսէ | Օ. Եւզեան |
| Յ. Կրէկեան | Ն. Բարսեղ |
| Մ. Գալստեան | Յ. Էմեան |
| Գ. Սելէֆէեան | Յ. Բարսեղեան |

Կ. Իսթ-Ֆեան	Յ. Աշտարեան
Տ. Փեշեմեան	Ս. Պէշեմեան
Յ. Նորասեմեան	Տ. Եսեմեան
Մ. Չոյանեան	Մ. Էսեմեան
Գ. Մարտեան	Մ. Հեմեան
Ղ. Հեմեան	Ն. Շահաշ
Մ. Ալեքսեան	Պ. Պաշտեան
Յ. Պոյանեան	Մ. Մարտեան
Յ. Նորասեմեան	Յ. Յեմեան
Հ. Մարտեան	Ա. Տէրբէ
Ն. Քաշեան	Յ. Շահեան

Յետ ընթերցման, երեսփոխան Միսաքեան Պետրոս էֆէնտին ալ ելաւ նոյն թուղթն ստորագրել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կուզենք գիտնալ թէ այդ ստորագրողներուն ամենն ալ վերջին նստին ներկայ էին և քուէ տուին:

ՄԻՍԱՔԵԱՆ Պ. ԷՖ. — Ես ներկայ չէի վերջին նստին, ուստի և չեմ կրցած քուէին մասնակցիլ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ուրեմն իրաւունք չունէիք ստորագրել:

ՄԻՍԱՔԵԱՆ Պ. ԷՖ. — Ես ներկայ չէի թէև, բայց համամիտ եմ. և կարծելով թէ գրաւոր քուէարկութիւն կըլլայ այսօր, ստորագրեցի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Երեսփոխանէ առ երեսփոխան խօսակցութիւնն արգիլեալ է ըստ կանոնի. դանք որ կարգացւած գիրն այսօրուան նստին վերաբերութիւն մը չունի, այլ անցեալ նստին մէջ կատարուած քուէարկութեան գործողութեան մը կը վերաբերի. այս տեսութեամբ Միսաքեան էֆէնտի քանի որ անցեալ նրստին բացակայ էր, իրաւունք չունի ըստորագրութիւն դնել. ուստի կը հրաւիրեմ զինք՝ որ իր գրած ստորագրութիւնն իւր ձեռքը ջնջէ:

ՄԻՍԱՔԵԱՆ Պ. ԷՖ. — Շատ լա՛ւ. (և բռնաբանութեան լուր տարագրութեանը Զօլեց):

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Յաւ կը յայտնեմ ես այս խնդիրն այս կերպով գարծ-

եալ այս ատենին մէջ բերուելուն համար. մեր ներքին կանոնադրոյն մէկ տրամադրութիւնն առաջին անգամն է որ գործադրելու ելանք. յիշատակելով մը միայն անցնիլ բաւական էր կարծեմ. բայց կը տեսնեմ որ խնդիրն ուրիշ գոյնով մը գարծեալ նորոգել կուզուի. ասոնք չափազանցութիւններ են, և ասոր համար իբր երեսփոխան ցաւ կը յայտնեմ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Անցեալ նրստին ինձ դէմ 'ի գործ գրուած պատժական քուէարկութիւնը դադտնի էր, և իբր այն ներքի չէր կրնար ըլլալ այսօր քուէարկուաց անունները յայտնապէս նշանակել. բայց որովհետև ժողովն ստորագրեալ առաջարկութեան մը ձեին տակ այդ անունանական քուէարկութեան սկզբունքն ընդունեց և հաստատեց այսօր, չնորհակալ եմ որ այս կերպով մեզի ալ ստիժ առած եղաւ, որպէս զի դալ նստին մեք ալ բերեմք ստոր հակառակը հաստատող ստորագրողաց ցուցակ մը:

ԳԱՐԱԳԱՇ Ն. ԷՖ. — Ստորագրողներն մէկն ալ ես ըլլալով կը յայտարարեմ թէ այդ առաջարկութիւնն ընելով մեր գիտաւորութիւնը չէ կրկնել նորէն թէ Օգսէն էֆէնտի արժանի է դատապարտութեան, այլ պատճառն այն է որ անցեալ նստին քուէարկութեան արդիւնքն անորոշ և չփոթ ցուցնելու համար ըսող եղաւ թէ քուէի մասնակցողաց թիւն այսչափ կամ այնչափ էր, ուստի այս կէտը պարզուելու համար և քուէարկութեան մասնակցողաց թիւը յստակ կերպով յայտնուելու համար է միայն այդ ստորագրութիւնը դնելնիս:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Միջադէպ մ'է այս, որուն վրայ խօսքն երկարածդել չարժեր. արդէն մէկ և միւս կողմէ մէյմէկ անգամ խօսուած ըլլալով, կրնանք փակել միջադէպն, սա համաձայն բացատրութեամբ: Ես ալ 'ի սկզբան տեղեակ չէի այս գրոյն պարունակութեան. զիր մը կար ատենադպիր էֆէնտիին ուղղուած, կարգացինք զայն անմիջապէս և

չէինք կրնար ուրիշ կերպով ընել. բայց դիւանն այդ գրոյն ընթերցմամբ անպատեհութիւն մը գործած ըլլալու տեղի չը տուաւ, կարծեմ: Ես բացարձակապէս ըսեմ ձեզ այդ գրոյն նշանակութիւնը. անցեալ նստին մէջ Օգսէն էֆէնտիի դէմ կանոնին տրամադրած պատժական տնօրէնութեանը համար կատարուած քուէարկութեան արդիւնքն էր մէկ քուէ հակառակ կողմէն, իսկ միւս կողմէն մեծամասնութիւն. սակայն յետոյ բողոքող եղաւ իբր թէ քուէից մեծամասնութիւն չկար և քուէն սխալ համրուած ըլլար, և այսպէս նոյն քուէարկութեան արդիւնքը կասկածի տակ ձգել ուղղուեցաւ: Հիմա այս գիրն ստորագրողաց միտքն ուրիշ բան չէ, այլ զայն ատենադրութեան մէջ անցունել տալով ցոյց տալ որ նոյն քուէարկութեան մէջ երբէք սխալ կամ խարդախութիւն մը տեղի ունեցած չէ:

Այժմ կանցնիմ ուրիշ կէտի մը, զոր այս առթիւ հարկ կը համարիմ բացատրել, քանի որ բարեբաղդաբար Խորէն Արքայան այսօր ներկայ է և դարձեալ ժողովին կը նախագահէ: Ըստ որում մեր ներքին կանոնը կը տրամադրէ որ Ժողովին մէջ քուէից հաւասարութիւն պատահած ատեն մի միայն Նախագահ Պատրիարք Արքայանին քուէ տուած կողման պէտք է հակի որոշումն, իսկ նորա բացակայութեան միջոցին Ատենապետին կը թողու նոյն իրաւունքը, կանոնին ճիշդ այս տրամադրութեանը համեմատ անցեալ նստին Օգսէն էֆէնտիի վերաբերեալ քուէարկութեան առթիւ քուէից հաւասարութիւն պատահելուն պատճառաւ ատենապետնիդ իւր վրայ առաւ այն պարտաւորութիւնը կատարել, զոր Աբրահամ Պատրիարքն ինքն պիտի կատարէր եթէ ներկայ ըլլար. և զայս ընելով երբէք մտքէս չէր անցնել թէ Խորէն Արքայանին՝ որ առժամանակեայ նախագահութեան պաշտօնն ստանձնած էր, իրաւանց դէմ բռնարարութիւն մը գործած ըլլամ. սակայն իմացայ որ Խորէն Արքայան այս պատճառաւ ցաւած է՝ կարծելով թէ իւր

Նախագահական իրաւունքը կատարած եմ իւր ձեռքէն. ուստի գիտնալով որ ասի սխալ հասկացողութեան մը հետեանք է, պարտք սեպեցի բացատրել հաստատելու համար թէ Գիւանը սխալ քայլ մ'առած չէ այս պարագային մէջ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Խօսք կուզեմ, Ատենապետ փաշա, ձեր բացատրութեան մէկ սխալ կէտն ուղղելու համար: Ձեր տուած քուէն յանդիմանական վճռոյն համար չէր, այլ վիճարանութեան փակման համար. իսկ յանդիմանական քուէին դալով՝ արդիւնքն երկրայութեան մէջ մնաց. Փափագեան էֆէնտի միայն չէր բողոքողը քուէարկութեան արդիւնքին դէմ, այլ ամենս մէկէն կը պօռայինք և չէինք ընդունել յանդիմանական վճիռը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես ալ յանդիմանական վճռոյ մասին քուէ տուի չեմ ըսեր. այլ վիճարանութեան փակումն ըստ որում ուղղալ կար, չուղղալ կար, քուէի դրուելով, երկու կողմէն ալ քուէները 27ական հաւասար եկան, այս պարագային մէջ էր որ իմ քուէս տալ հարկ եղաւ ըստ կանոնի: Իսկ յանդիմանական վճռոյն չմասնակցեցայ:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ: քուէներուն սխալ ըլլալը պիտի ցուցնեմ. անցեալ նստին քուէից թիւն 33 է ըսուեցաւ. այդ ստորագրութիւնները նոյնքան թիւ չեն կազմեր և չեն համաձայնիր քուէից արդիւնքին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք, պէտք է որ գոցուի այս միջադէպը. ստոյգ է որ այս ստորագրութեանց թիւը ճշգիւ չպատասխաներ անցեալ նստին իբր քուէարկու համրուած թուոյն. այս ամեն պարագայներն ատենադրութեան մէջ պիտի հրատարակուին, այլ ևս ի՞նչ հարկ երկարելու:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐԿԱԶԱՆ. — Ըստ որում ինձ ակնարկութեամբ քանի մը խօսք ըրիք, Ատենապետ փաշա, հարկ է որ բացատրութիւն մը տամ: Ես ցաւ չեմ յայտ-

նամ, և ոչ նախագահութեանս կարևորութիւն մը տուած, վասն զի առժամայէր. բայց զարմանք յայտնած եմ անոր համար որ նախագահը քուէից հաւասարութիւն պատահած ատեն չէ փնտռուած, այլ միայն յանդիմանական վճույզ որ ծաղրութեան միջոցին փնտռուած է. այս էր միայն զարմանալուս պատճառը, կը խնդրեմ որ արձանագրուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում մէկ քանի անգամ հրաւիրեցի Ձեր Արքայութիւնը՝ որ ժողովին վճիռը գործադրէք, և չգործադրեցիք, պատճառն որոնեցի և վստահութեան արժանի անձէ մը իմացայ թէ դուք նոյն օրը վշտացած էք՝ իբր թէ նախագահական պաշտօնին առջեկ կողմը չձգուեցաւ ձեզ, և տխուր կողմը միայն տրուեցաւ: Այդ ցաւերնիդ փարատելու համար փութացի պահ մը յառաջ բացատրել Աննոնագրութեան նոյն կէտին վերաբերող տրամադրութիւնը, որ եթէ իւր թերի կողմն ալ ունենայ՝ ինձ չը վերաբերի. ևս կանոնին տրամադրութիւնը միայն գործադրեցի: Աստի խնդիրը կը գոցենք:

4.

Ղալաթիոյ ժողովոյ անդամները:

Ատենապետ փաշան ժողովին ներկայացուց և կարգաց յետագայ աղերսագիրն, որ Ղալաթիոյ ժողովրդեան կողմէ մատուցուած էր.

Ամենապատիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Ընդհ. ժողովոյ.

Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ թաղին ժողովուրդքս, թէ և նոյն Ս. եկեղեցւոյ մէջ միշտ կաղօթենք և մեր տուրքն անոր կը վճարենք ամենայն յօժարութեամբ և ըստ կարեաց մերոց, բայց մեր թաղին խորհուրդն ընտրելու մասին իրաւունքնիս ցարդ անտես առնուած ըլլալով, այժմ Ազգային գերագոյն ժողովի կը դիմենք և կը խնդրենք որ մեր

ընտրական իրաւունքը Սահմանագրութեան համաձայն մեզի տրուի:

(Սորոք-Քրեմլ)

Թաղ. խորհուրդը հրատարակ ըլլալով, թաղիս ժողովրդեան սոյն ստորագրութիւնը կը վաւերացնեմք, յայտնելով միանգամայն թէ ասոնց մէջ կան սեղանաւոր, հացագործ, սենեկապետ, սափրիչ և այլ արհեստաւոր անձինք:

1877 մարտ 10 Ա.Քրեմլ Մ. Վրդ. Քարողիչ Ղալաթիոյ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Օրէնքը կը պահանջէ որ այսպիսի աղերսագրերն արձանագրեալ ըլլան Պատրիարքարանի մէջ. և ըստ որում այս աղերսագրին արդէն Պատրիարքարանի դիւանական արձանագրութիւն և կարգահամար կը կրէ, պէտք է յղուի Յարարեութեան դիւանին՝ ի նախաքննութիւն:

Ժողովն Ատենապետ փաշային առաջարկած սոյն յղումն ընդունեց. առանց դիտողութեան:

5.

Առաջարկութեան Քրեմլ-Քրեմլ եֆէնդի:

Ազգային երեսփոխան Քրիստոստուր էֆէնդիի յետագայ առաջարկութեան գիրը կարդացուեցաւ.

Վսեմափայլ Ատենապետ փաշա Ազգային Ընդհանուր ժողովոյ.

Այսարհիս ամեն կողմ գտնուող Հայ գաղթականաց (ոչ թէ միայն Ա. Պոլսոյ Պատրիարքական իշխանութեան ներքե գտնուող երկիրները՝ այլ ուր որ Հայ կը գտնուի) թէ նիւթական թէ բարոյական և նոցա ազգային կենաց վիճակը ազգին գիտնալ պէտք է. ինչպէս վաճառական մը իրեն պատկանած դրամագլխոյն որքանութեան հաշիւը կունենայ և միշտ կը դիտէ, նոյնպէս նաև բարեկարգեալ ազգերը իրենց ժողովրդոցն թէ թուոյն որքանութիւնը և թէ ամենայն մասի նո-

ցա վիճակը միշտ խնամօք նկատողութեան կառնուել, այսպէս նաև մեր Հայ ազգը իբրև բարեկարգութեան հետամուտ ազգ՝ պէտք է գիտնայ թէ ո՞ւր Հայ կայ և ո՞րչափ է նոցա թիւը, նոցա նիւթական և բարոյական ազգային վիճակը և ստացուածքը: Թէ և մինչև ցարդ թէ ազգային և թէ օտարազգի այլ և այլ ճանապարհորդաց ոմանց օրագրութեանց այս մասին եղած հատուածները հրատարակուելովն փոքր ի շատէ հետաքրքիր ազգայնոց ուշադրութիւնը գրաւած են. բայց իւրաքանչիւր անհատի լիւր մասնաւորաց կարողութիւնքն չեն ներեր ընդհանուր և գործնական կերպիւ վիճակագրութիւն ընել և որով տեղեկանալ նոցա անհատական, ընտանեկան, կրօնական և ազգային կենքն, այսինքն յառաջաման, բարւոքման վրայ են թէ նուազման. ի լաւութիւն թէ ի յոռութիւն կը դիմեն:

Արդ անհրաժեշտ պէտք է ազգային պաշտօնական յատուկ մարմնոյ մը հաստատուիլը, որ կարենայ այս վիճակագրութիւնը լիովին ի գլուխ հանել, մեր ազգային անհատական թուոյն և ստացուածոց սպառման պատճառները քննելով նոցա պէտք եղած դարմանին ծրագիրն շինել:

Աստի կը խնդրեմ Ազգային ժողովէս՝ որ այս առաջարկս յօգուտ ազգի նրկատողութեան առնելով վիճակագրական տեղեկութիւնքն հաւաքէ այս մասին հրմուտ և գործունեայ անձանցմէ կազմեալ Խառն ժողովոյ մը միջոցաւ, որ ծրագիրը շինելով բերէ Ընդհանուր ժողովոյս, և Ազգ. ժողովս պէտք եղած տնօրէնութիւնն և որոշումը տայ:

11 մարտ 1877 Ազգային երեսփոխան Ք. Ղալաթիոյ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս խնդիրն ալ իբր վարչական խնդիր՝ պէտք է յղել նախաքննութեան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ո՞ր խնդիրն որ կուզենք յետաձգել՝ այն կը յղենք նախա-

քննութեան. որովհետև ինչ խնդիրներ որ մինչև ցարդ յանձնուեր են նախաքննիչ դիւանաց, առ կախ մնացեր և պատասխանները չեն եկեր: Նախաքննութեան յղուած և անպատասխանի մը նացած այս տեսակ խնդրոց մէկ ցուցակըն աւասիկ պատրաստած եմ և պահ մը վերջը պիտի ներկայացնեմ ժողովին: Գոնէ յգելի խնդրոց իւրաքանչիւրին համար մէյ մէկ պայմանաժամ որոշուի և այնպէս յանձնուի դիւանաց, որպէս զի պարտաւորին պատասխանը փութացնել մինչև պայմանեալ օրը, և եթէ զանց ընեն ձրգւին իրենց պաշտօնէն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Իբր թշնամանք կուզէք այդ խօսքը Դիւանին, Փափագեան էֆէնդի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ո՞չ, ո՞չ. իմ խօսքս Դիւանին չվերաբերի. Նախաքննիչ դիւանաց համար է, որ չեն գործեր և իրենց յանձնուած խնդրոց տեղեկագրերն չեն բերեր ժամանակին, կառաջարկեմ որ պայմանաժամաւ յղուին այսուհետև խնդիրները:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն մտքերնուդ համեմատ կարգադրեցէք խօսքերնիդ. զի «Դիւաններուն յանձնուած գործերն չեն կատարուիլ» ըսելը դժգոհութեան խօսք մ'է, բայց ներելի. իսկ «Ո՞ր խնդիրն որ յեպագել կ'ուզէ» ըսելը նախապնդումն էր յգել» ըսելը թշնամանք է և ոչ ներելի:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Քրիստոստուր էֆէնդիի առաջարկութեան կարևորութիւնն ևս ալ կ'զգամ, ուստի ինչպէս ուրիշ պարագայից մէջ եղած է, այս մասին ալ կրնայ ժողովն իր մէջէն մասնաժողով մը կազմել և անոր յանձնել պէտք եղած վիճակագրութեան պատրաստութիւնը:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Փափագեան էֆէնդի խօսք մ'ըրաւ, Ատենապետ փաշան թշնամանք համարեց, և երբ հարցուց թէ թշնամական մտօք ըսաւ արդեօք, նա ո՞չ պատասխանեց, և ասով գոհ եղաւ Ատենապետ փաշան ու ներեց. ցաւալի է որ Դիւանը մի և նոյն ընթացքով

վարուհի Զամապատասխանող ղէպքերու մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ թընամանքը Դիւանին ուղղեալ էր, Զարցուցի և ներդրամիտ եղայ, զի դիտմամբ եզած չըլլալն Հասկցայ իսկ ժողովին ուղղեալ թշնամանքի մը ներել Դիւանին ձեռքն Հասութեանէն վեր է. ժողովն իրեն վերաբերեալին Համար ինք միայն կրնայ տընորէնութիւն ընել:

ՓԱՓԱՂԵԱՆ Ա. ԷՖ. — Թշնամանք բարը չեմ ընդունիր. ես ըսի թէ երբ խընդիր մը յետաձգել ուղենք՝ նախաքննութեան կը յղենք. այս յղուած խնդրոց ցուցակն առ ձեռն ունիմ ըսի, հոն պիտի տեսնէք թէ ո՞րչափ խնդիրներ առ կախմնացած են. այս պատճառաւ պայմանաժամաւ յղում առաջարկեցի. Դատարարութեան խնդրոյն ատենն ալ այդ առաջարկն ըրի, որ ընդունուեցաւ, և պատասխանն ալ օրին եկաւ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Վիճակագրութեան Համար ըրած առաջարկութիւնս նախաքննիչ զիւանաց երթայ ըսուեցաւ, և Մելիքեան էֆէնտին մասնաժողովի մը յանձնել առաջարկեց: Թէպէտև առաջարկութեանս նիւթն երկար է և ես չուզեցի երկարորէն գրել ձանձրոյթ չպատճառելու Համար, սակայն այնքան կարևորութիւն ունի՝ որ հարստահարութեանց խնդրէն աւելի վնաս կը պատճառէ. ազգին ստացուածքը ծովամոյն կըլլայ. պէտք չէ որ ասանկ կարևոր խնդիր մը դիւանաց ձգուի, ժողովն ինք ուղարկութեան ատենը է իր մէջէն մասնաժողովի մը յանձնելով: Ես առեղեր Հայոց ազգէն դաղթականութիւններ ունինք, սակայն անոնց ազգային բարոյական և նիւթական վիճակին վրայ տեղեկութիւն մը չունինք. մեր մէջ չկայ այնպիսի ընկերութիւն մը՝ որ վիճակագրութեան ճիւղն իրեն նիւթ ընտրէ և անով գրադի. Հրբեաններն անգամ Իսրայէլեան անունով ընկերութիւն մ'ունին՝ որ կը գործէ շարունակ. ինչո՞ւ մեք չունենանք. ասա՛

կազմեալ ընկերութիւն մը՝ որ է այս ժողովն եկեղեցական և աշխարհական ամեն կարգի անդամներէ խառն: Աւտի Մէլիքեան էֆէնտինի կը ձայնակցիմ, որ ժողովն ինք ստանձնէ այս գործը և իր մէջէն կազմեալ մասնաժողովի մը յանձնէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քրիստոստուր էֆէնտինի առաջարկութիւնը ուղղակի վարչութեան զրկել անկ էր, ես նախաքննութեան յղել առաջարկեցի, զիտեղով քաջ թէ նախաքննիչ զիւանն ալ դնոյն պիտի առաջարկէ: Ասկէց մի քանի տարի առաջ երբ հարստահարութեանց խնդիրը կը յուզուէր ժողովիս մէջ, դիտողութիւն ըրած եմ թէ այս տեսակ խնդիրներ չեն կրնար Ազգային ժողովի մէջ ի հրապարակի յուզուիլ զի վարչութեան կը պատկանին և պէտք է անոր յանձնուին: Այսօր դարձեալ նոյնը կը կրկնեմ. եթէ վարչութիւն մ'ունինք՝ թողունք վարչական խնդիրներն ինք տնօրինէ. եթէ չունինք կամ եթէ ունինք ու չգործեր, վարչութիւն մը կազմելու ենք և կամ հնոյն ըսելու ենք թէ տեղի տուր այլում, և թողելու ենք որ նա գործէ և մեք հսկենք: Եթէ այս տեսակ խնդիրներ՝ որ վարչութեան կը պատկանին, մեք վրանիս առնունք և յանձնախմբեր կազմելով՝ յանուն և ի դիմաց ժողովոյ տնօրինենք, ո՞վ պիտի հսկէ մեր վրայ և Համարարութեան պահուն միթէ վարչութիւնն իրաւունք չունենար մեզ պատասխանելու թէ դուք փոխանակ հսկելու՝ կը գործէք և կուզէք որ ե՞ս ըլլամ պատասխանատու: Զը յնդարջեմք Սահմանադրական պարտաւորութիւննիս. Ազգահամարի և Վիճակագրութեան գործը վարչութեան գործն է. նա գործող պէտք է մնայ և մեք հրակող. եթէ մեք պիտի գործենք և հսկող չունենանք, վարչութեան ինչ հարկ ուրենն. և Սահմանադրութիւնն ալ չներեր այսպիսի յեղաշրջումներ որ Ազգային գործոց տնօրէնութեան մէջ +մէրուլ աննչան բաւ կը ձգեն: Աւտի սոյն խնդիրը փոխանակ մասնաժողովական յանձնախմբի մը տնօրէնութեան յանձնելու,

ինչպէս կառավարկեն Քրիստոստուր և Մ. Մելիքեան էֆէնտինները, կամ նախաքննութեան յղենք որպէս զի նախաքննիչ զիւանը խնդրոյն վարչութեան պատկանին տեղեկագրելով յղումն առաջարկէ, և կամ աւելի կարճ ընթացքով գորյն վերայ՝ յէլ Աղբային խնդրէն — էր լուրջութեանն — է — րէ որչափ անհարգութեան գործը յղուով յղենք վարչութեան, և գործողութեան հսկենք. և եթէ չգործողութեան այն ատեն պէտք եղածը մտածենք:

ՉԱՅՆԵՐ. — Կընդունինք վարչութեան յղել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ալ կընդունիմ որ ճիշդ սահմանադրական ընթացքով վարչութեան երթալու են այսպիսի խնդիրները, և առաջարկութիւնս գրի առած ատեն նոյն դիտաւորութեամբ պիտի գրէի թէ վարչութեան յանձնուի այս խնդիրն և անոր գործողութիւնն ստիպողական կերպով պահանջուի. սակայն պաշտօնակիցներէս յիշեցուցին ինձ թէ վարչութիւնն գրադեալ է ուրիշ ոչ նուազ ստիպողական գործերով և ժամանակ չունի այս խնդրոյն նայելու. այս խօսքով չհասկցուի թէ ներկայ վարչութիւնը գործել չուզեր. ոչ միայն ներկայ վարչութիւնն, այլ ուրիշ ո՞ր վարչութիւնն ալ ըլլայ, ժամանակ չգտներ այս վիճակագրական ծանր գործն ի զլուխ հանել. այս նպատակաւ հարկադրեցայ առաջարկել որ Ազգային ժողովն ստանձնէ սոյն գործը և յատուկ մարմին մը սահմանէ ի զլուխ հանելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս ժողովն եթէ պաշտօն մ'ունի նուիրական, հսկել է այն գլխաւորապէս վարչութեան վրայ առանց անոր գործոցը միջամտելու. ուստի հսկողութեան պաշտօննիդ մի՞ գանց առնէք և գործողութեան արթնութեամբ բայց մի՞ խառնուիք ձեզ զվերաբերեալ գործոց:

ՉԱՅՆԵՐ. — Այո՛ այո, այդ է Սահմանադրութեան ճիշդ պահանջումը:

4.
ԲՆԱՆՆԱՎԵՏ ԹԷՆԻ ԷՖԷՆԷՆՑԷ

Ատենապետ փաշան խօսք տուաւ Բ. Ատենադպիր Ալաճաճեանէֆէնտինի կարգալ յետագայ բողոքագիրն, որ Օթսէնէ էֆէնտինի կողմէ մատուցուած էր.

Վսեմաչոք Ատենապետ փաշա Ատենապետ Ազգային ժողովոյ.

Անցեալ նիստին հրաւիրած էիք զիս զալ ինքզինքս արդարացնելու Քաղ. ժողովոյ բողոքին առջև. ես ամենայն անկեղծութեամբ բացատրեցի այն նախաւապի պարագաներն՝ որք Քաղ. ժողովոյ կողմէն տեղի ունեցած էին Ազգ. ժողովոյս ղէմ, ուստի և ամբաստանելով զայն իր այդ հակասահմանադրական գործոցը համար, ամենայն ճշդութեամբ խոստովանեցայ թէ՛ այն բառը՝ որու ղէմ բողոքեր էր Քաղաքական ժողովը՝ բերնէս փախած է իմ կամքէս անկախ պարագաներու բերմամբ, պարագաներ՝ որոյ հեղինակը նոյն ինքն էր Քաղաքական ժողովն: Եւ զայս խոստովանելէն ետքը մեկնեցայ խորհրդարանէն, որպէս զի ժողովը անձնականութեան սողեցութեան պատ իր որոշումը տայ. Քաղ. ժողովն ալ իբրև բողոքող պարտական էր իմ օրինակին հետեւելով ժողովը ազատ ձգել իր բողոքին վրայ վճիռ արձակելու. սակայն ոչ միայն չէ՛ մեկներ նա խորհրդարանէդ՝ այլ մինչև անգամ ինձ ղէմ քուէ տալու ելեր է իբրև դատաւոր օդուա քաղելով ժողովոյ Քաղ. ժողովոյ բողոքարկու ըլլալու իրաւունք չունենալը վճռելէն, մինչդեռ ժողովոյդ այդ վճիռը դատապարտութիւն մ'էր Քաղ. ժողովին ղէմ՝ իբրև իբրև անոնց սահմանը չգիտցող մարմին մը, չգիտնալ ձեանալով այն դատապարտական օրէնքը թէ՛ բողոքողի մը բողոք ունենալու իրաւունք չունենալը վճռուիլն ալ բողոքողին ղէմ մինչև մէկ աստիճան գաստապարտութիւն է, թէ և անոր բողոքոյ նիւթը դատարանը իրեն իրաւասութեան սահմանին տակ առնելով դատապարտէ նաև ատոր ենթակայն:

Քաղ. ժողովոյ այդ կրած դատապարտութեան դէմ՝ որքան իրեն պատիւ չը բերեր իբրև վարչական մարմին և որու դէմ սահմանադրական պարտքեր ուներ կատարելիք, այն է վարչական թեթև կամ ծանր խնդիր յարուցանել, արդ դատապարտութեան դէմ կըսեմ՝ անդէտ ձևանալը աննպատակ չէր, այլ այն նպատակաւ էր որ եթէ բողոքող կարենալ չըլլալու կը դատապարտէք զիս՝ ուրեմն դատարարական հակառակ ամենայն օրինաց: Քաղ. ժողովն այդ նպատակն ունեցեր և ժողովիդ կամ անուշադրութեամբը և կամ քաղաքավարական մէկ թոյտուութեամբը, և որ առաւելն է՝ թերևս Քաղ. ժողովոյ կրած այդ դատապարտութեանը վրայ անոր յարուցանելիք վարչական խնդիրը մոռցնել տալու և խնդիր մը յարուցանել շտալու խաղաղական քաղաքագիտութեանէդ օգուտ քաղելով յաջողեր է հասնիլ իր նպատակին նոյն օրը. սակայն ես չեմ կրնար ընդունիլ անոր դատաւորական քուէն իր բողոք յարուցած խնդրոյն մէջ, ուստի կը բողոքեմ ատոր դէմ և պարզ բողոք մը ընելու պարտականութենէս անդին տակուին ընելու իրաւունք ունեցած գործողութեանցս ազատութիւնը ինձ կը վերապահեմ խնդրոյն բերմանը համեմատ կարենալ վարուելու համար:

Յայտարարեցիք ինձ նոյն օրը թէ ժողովը պարզ յանդիմանութեան քուէ վճռեց ինձ դէմ: Ձեր յայտարարութեան համեմատ՝ պարտաւոր էի ինքզինքս վճռեալ համարելու նոյն օրը, բայց ժողովականք մեծ մասամբ վճիռ չկայ յայտարարեցին յատենի ժողովոյդ, ուստի թէութեան տակ ըմբռնելով զայն՝ կըսեմ:

Եթէ իբրև վճռեալ ատոր գործադրութիւնը պիտի հրամայէք այսօր՝ շատ լսելիքներ ունիմ ատենական կանոն ի ձեռին թէ այդ վճռոյն և թէ ատոր գործադրութեանը դէմ, ուստի մէկ բառով այժմ միայն վերաքննութիւն կը խնդրեմ ու կանցնիմ՝ սպասելով որ այս խնդրոյն վրայ խօսք տուած ատեննիդ խօսիմ. իսկ

եթէ դատարարական ծանր և ամենակարևոր խնդրոյն ըստ օրակարգի ըստ օրակարգականութիւն պիտի տար ու վերագրեալ միջադէպը պիտի գոցէք և կամ ուրիշ նիստի պիտի թողու՞մք՝ դատարարականութեան խնդրոյն առաջին խօսքը կը խնդրեմ որ ինձ տար, զի այս մեծ խնդիրը՝ որ ազգին էն կենսական խնդիրն է՝ պատիւ ու պարծանք մ'է՝ ժողովին եթէ այն չըջանին մէջ լուծած ըլլայ ժողովս:

Ուստի՝ Ատենապետ փաշա՝ Քաղ. ժողովոյ դէմ ասկէ առջի նիստին մէջ ըրած այն ամբաստանութիւններս՝ եթէ այսօր դատարարականութեան խնդիրը պիտի յուզուի, յաջորդ նիստին կը թողում յառաջ վարել մինչև որ դատարարականութեան խնդիրըն աւարտի: Քաղ. ժողովն ալ եթէ ինձ չափ կարևորութիւն կուտայ դատարարականութեան խնդրոյն և իմ կամքէն անկախ պարագայէ մը բերնէս ելած մէկ բառին վրայ չպնդէր՝ թող նա ալ այս խնդիրը՝ որ արդիւնք մը չունի ազգին առաջը որչափ ունի դատարարականութեան խնդիրը՝ այս վերջնոյն լուծուելէն վերջի թողու, որպէս զի երբեք չըլլան բառին խնդիրը լուծած ըլլալու պարծանք ժողովուս այս չըջանը փակելու տեղ՝ դատարարականութեան խնդիրը իրօք լուծած ըլլալու մեծ պարծանքովը փակենք:

Արդ երկու խօսքէն մէկը ինձ շնորհելուդ կ'սպասեմ. կամ երբեք չըլլան բառէն յառաջ եկած խնդրոյն վրայ իմ կանոնական խօսքը և կամ դատարարականութեան խօսքը, որոյ առաջին խնդրողն եմ ըստ կարգի:

Մնամ ամենախոնարհ ծառայ
 11 մարտ 1877 Չերում վսեմութեան
 Խորհրդարան Ազգ. երեսփոխան
 Ղալաթիոյ Օ. Խոճաւարեան

Ա. Ա. Ճ. Ա. Ճ. Ա. Ն. Է. Թ. — Իբր ատենադպիր սոյն բողոքագիրը կարդալէ ետև, իբր երեսփոխան դարձեալ ցաւ կը յայտնեմ այս խնդիրն անդրէն աստ գալուն համար: Ի զուր գմեղ ժամավաճառ կրնեն այսպիսի խնդիրներ. ուստի կտուաջարկեմ որ բոլորովին գոցուի այս խնդիրը:

ՔԱՆԻ ՄԸ ՉԱՅՆԵՐ. — Կը կրկնենք, ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Է. Թ. — Դատարարականութեան խնդիրը ձեռք առնենք:

ՓԱՓԱԶԱՆ Ս. Է. Թ. — Կը կրկնեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս խնդիրը գիււանիս վրայէն վերցնել փափաքելի է. սակայն կէտ մը կայ պակաս, այն ալ լրացնենք և ապա անցնինք ուրիշ խնդիրներու: Նախընթաց նստին ժողովը վճիռ մը տուաւ, բայց չգործադրուեցաւ. ատոր գործադրութեամբը ժողովը գոհ կըլլայ և ո՛չ ոք կը վնասուի. ոչ Քաղ. ժողովը կրնայ հրճուիլ թէ Օգոսէն էֆէնտի դատապարտուեցաւ, զի անոր բողոքին համար չարուեցաւ նոյն վճիռն, այլ ժողովիս պատկառանաց դէմ եղած պակասութեան մը համար, և ոչ Օգոսէն էֆէնտի կրնայ բողոք բառնալ, զի ինքն ևս խոտտովանեցաւ թէ պակասութիւն էր գործածը, բայց յակամայից, վասն զի Օգոսէն էֆէնտի յատուկ դիտում չունէր թշնամանել զոր, այլ անդուշարար անվայել բառ մը բերնէն փախուց. ուստի ոչ վճիռը վճիռ չէ ըսելու տեղի կայ և ոչ վերաքննութիւն խնդրելու. Նախագահ Սրբազանին կը մնայ երկու բառով վերջացնել զայն, և խնդիրը բոլորովին կը վերնայ այս ատենանէն: Սրբազանին ըսելիքը կարծեմ սա՛ մէկ խօսքովը կը լմնայ, որքէն է՛, շէնջ լէր այսուհետէ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. Է. Թ. (ընդհատ) — Եթէ ամենէն թեթև բառն ալ ըսել տալ ուզէք, կը բողոքեմ: Այս խօսք մ'անգամ չեմ ընդունիր:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք, մի ընդմիջէք զիս. եթէ այսպէս վարուիք, բարեկարգութիւն չպահուիր այս ժողովին մէջ. թոյլ տուէք որ խնդիրն օրինաւոր կերպով վերջացնենք. ես կը կարծեմ թէ այսօր մեր տարեկան շրջանին վերջին նիստը պիտի ըլլայ. ուստի չեմ ուզեր պատժական տնօրէնութեանց դիմել. խաղաղութեամբ վերջացնենք շրջաննիս. ըսի թէ արդէն վճիռ մը կայ, չեմ կրնար զայն նորէն խնդրոյ նիւթ ընել. գործադրու-

թիւնը միայն մնացած է, որ Նախագահ Սրբազանին կը պատկանի. ուստի խօսք կուտամ Խորէն սրբազանին՝ որ իւր պաշտօնը կատարէ:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Երեսփոխան տեարք, ստոյգ է որ անցեալ անգամ ՚ի Դիւանէ ինձ առաջարկութիւն եղաւ որ Նախագահական պաշտօնս կատարեմ այս գծադր պարագային մէջ. ստոյգ է և այն՝ որ երկու անգամ ձայնս աւ Ատենապետ փաշայն ուղղեցի, մինչև անգամ ոտք իսկ ելայ խօսիլ ուղեւս ցուցնելու համար, բայց նոյն պահու յուզմանցը մէջ ձայնս լսելի չէր կրնար լինիլ և արձագանք գտնել այն ժողովարանին մէջ՝ զոր կիրքն ու հակառակութիւն թափուր թողուցին ՚ի ժողովականաց:

Բայց ի՞նչ պիտի խօսէի, տեարք. — Ինչ որ պարտք համարած էի ինձ խօսիլ այն օրը, նոյնն ահա ըսեմ այսօր: Տեարք, իմ պաշտամանս և բնութեանս յատուկ անկողմնակալութեամբը, և անշուշտ ձեզ հետ համաձայն կըսեմ թէ՛ ցաւալի է տեսնել որ երեսփոխան մը պաշտօնական մարմնոյ մը դէմ, պաշտօնական հանդիսարանի մը մէջ նախատական բառ մ'արտասանելու չափ կը նուաստանայ, բայց քան զայն ցաւալի է տեսնել որ երեսփոխանական ժողով մը մէկ բառի մը համար քանի մը նիստ զոհելու և մինչև անգամ ժողովրդեան առջև իւր երկպառակութեան վերքը նշաւակելու կը խոնարհի: Տեարք, այն վեհազոյն ժողովն՝ ուսկից ժողովուրդը կակընկալէ իւր փրկութիւնն, եթէ այս տեսակ ամուլ ու մոմաւանդ թէ վնասակար վէճերով և վրիժառական խնդիրներով իւր անդին ժամանակը վատնէ, միթէ իւր անուանն ու պաշտօնին արժանաւոր կը հանդիսանայ: Ինչ կը կարծէք, միթէ մեք երեսփոխանքս՝ որ հոս զրկուած եմք ազգէն՝ որպէս զի նորա ցաւերուն դարման տանիմք, մեր այս օրինակ ընթացքովը կը դարմանեմք, թէ նոր ՚ի նոր ցաւեր կաւելցնեմք: Այս և մեր նուիրական կոչումն. ամեն մէկ վայրկեանը՝ զոր հոս կը վատնեմք ոչ յօգուտ

ազգին, պատասխանատուութիւն մը կը հրաւիրէ մեր վրայ: Եթէ այսօր ազգը լուռ կը կենայ, ապագան մեզմէ համար ոյիտի պահանջէ մեր ապարդիւն ժամափաճառութեան վրայ, և պիտի դատապարտէ զմեզ եթէ զործ և արդիւնք չը ցուցնենք, և սոսկ կիրքերնիս յազեցնելու ասպարէզ մը դարձունենք այս սրբափայրը:

Ինչ է այն խնդիրն՝ որ զմեզ այսչափ կը յուզէ և կ'զբաղեցնէ. ոչ այլ ինչ, այլ բառ մը՝ զոր արտասանող երեսփոխանը կը խոստովանի անկեղծութեամբ թէ բերնէն սպրդեր է. ինչո՞ւ ներողամտութեամբ չը վարուիմք, ինչո՞ւ չըսենք զայն որ խղճերնիս կը վկայէ թէ իբրև մարդ՝ ամենուս բերնէն կրնայ սպրդիլ բառ մը, զոր յուզմունքն ու անզգուշութիւնը կրնան սահեցնել մեր շրթունքներէն, և զոր իսկոյն կը դատապարտէ գիտակցութիւնն իւր ազգած ստրջանօրը: Ահա նոյն ինքն այն երեսփոխանն ոչ եթէ կը պնդէ կը յամառի և կը պաշտպանէ իւր բերանէն ելած թշնամական բառն, այլ մենէ առաջ ինքն իսկ կը դատապարտէ զայն: Միթէ այս բառական չէ՞ հատուցում մը համարելու. ինչո՞ւ հանդիսական դատապարտութիւն՝ պատիժ տնօրինել անոր, որոյ անկեղծ խոստովանութիւնը տպացոյց մ'է իւր կողմէն անցելոյն ստրջանացը և սպազային համար երաշխաւորութիւն: Սակայն սոյն երեսփոխանը, տեա՛րք, մեր ամենէն ընտիր ընկերակիցներէն մին է իւր ազգասիրութեամբն՝ ուղղամտութեամբ և երեսփոխանական յատկութեամբք. այս ամենայն 'ի նպատակ նորա շէն խօսիր. միթէ այս ատեանէն դուրս ալ նորա առ ազգն մատուցած ազգի ազգի ծառայութիւնք բառական չեն մեր քուէն ի ներողութիւն դարձնելու: Եթէ քուէարկութիւն մ'ունինք, քուէարկեմք՝ ո՛չ թէ իրարու դէմ, այլ ազգին թշնամեացը դէմ. քուէարկեմք վերջապէս լոյսը ծաւալելու խնդրոց համար. իսկ իրարու ձեռք երկնցնեմք հաշտութեան, վասն զի սիրոյ ասպարէզին մէջ կը գտնուիմք: Ա-

թէ սէրը չարմատանայ մեր մէջ, պիտի կրնա՞մք միանալ այն բաներուն մէջ՝ ուր միութիւն անհրաժեշտ է: Դատարարակութեան կենսական խնդիրն ունիմք մեր օրակարգին մէջ . . .

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ.—(Մէջնիւն) Եւ մեռել թաղելու կերթանք:

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱՋԱՆ.—(Շորունիւն) Տեա՛րք իմ, այո՛, դատարարակութեան խնդիրը հրաւիրեց զմեզ այսօր հոս. ևս իմ հիւանդութիւնս առ ոչինչ համարելով և դուք ամենքդ անձնական գործերը մէկ դի ձգելով, վազեցինք և կանք Դատարարակութեան կենսական խնդիրը լուծելու համար, և ոչ եթէ մեր մէկ ընկերակիցին անզգուշութիւնը գտանելու և դատապարտելու խնդրով ժամափաճառ լինելու համար:

Արեւմտեան կառավարիկն որ այս խնդիրը միանգամ ընդ միշտ գոցուի ներողութեամբ 'ի պատիւ ժողովոյս:

Քաղաքական ժողովէն ևս կը խնդրեմ որ վեհանձնարար մտնայ այն բառն, որ Օգսէն էֆէնտի բերնէն սպրդեր է, և առաւելապէս սիրէ զբաղիլ և զմեզ զբաղեցնել այն խնդիրներով որոց նպատակն է ազգին բարելաւութիւնն ու յառաջագիտութիւնը:

Ախտեմք ամենս ալ վրէժխնդիր չը լինիլ, և միասիրտ ու միահաւան անցնիմք մեր ամենակարեւոր գործին, որ է Դատարարակութեան խնդիրը:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ.—Շատ լաւ, Արքազան, ներողութեան առաջարկութիւն կրնէք, և գոցել կուղէք խնդիրը, բայց որոշում մը կայ ո՛չ գործադրուած, անոր հակառակ ո՛ր ևէ տնօրէնութիւն առանց նոր որոշման չկրնար ըլլալ, և դուք գիտէք որ այս ժողովիս մէջ որոշումները քուէով կըլլան. ուստի քուէարկութեան մը կը կարօտիմ խնդիրն ըստ կանոնի վերջացնելու համար. կընդունի՞ք քուէարկութիւն և կը կարծէ՞ք որ ՉԱ ձայնից միարանութիւն կ'ստացուի վաւերական որոշումն ունենալու համար:

ՉԱՅՆԵՐ.— Այո՛, այո՛, քուէի դրէք, փորձենք:

Ատենապետ փայան քուէի դրաւ Նախագահ Արքազանին ներողութեան առաջարկութիւնն Օգսէն էֆէնտի մասին, և ժողովը 28 ձայնիւ ընդունեց, որով Օգսէն էֆէնտի վերաբերեալ պատժական տնօրէնութեան խնդիրը փակուեցաւ ներողութեամբ:

7.

ՀԱՆՔԻՆԻ ԿԵՐ. ՍՆՊԻՆԻ

Վարչութեան Քաղ. ժողովէն մատուցուած յետադայ տեղեկագիրը կարդացուեցաւ, որոյ հետ կցուած էր Կեղբ. սընտուկին ներկայ 76—77 տարւոյն հաշուեկը շիւր:

Վսեմափայլ Ատենապետ փայա Ազգային ժողովոյ:

Ազգային Վարչութեան Քաղ. ժողովս անցեալ 1876 տարւոյ յունիս ամսոյն մէջ Ազգային ժողովոյը ընտրութեամբ իւր պաշտօնավարութեան ձեռնարկելէ ետև, անմիջապէս Վարչութեան Տնտեսական խորհուրդն ու Ելևմտից Հոգարարձութիւնը վերակազմելով, նոցա գործակցութեամբ իւր առաջին փոյթն ըրաւ Կեղբոնական սնտուկի վիճակին բարւոքումը ձեռք բերել, և ներկայ 76—77 տարւոյն Հաշուեկիւր պատրաստել Ազգային ժողովոյը որոշման ներկայելու համար:

Սակայն իւր փառաբանաց հակառակ չկրցաւ Հաշուեկիւրին ներկայացումը փութացնել, վասն զի Հաշուեկիւրն ազգային ամենակարեւոր պէտքերն ըստ բառականին հոգալու գրութեամբ պատրաստելու համար՝ հարկ էր ազգային տըրոց վերջնական գումարին քանակութիւնը գիտնալ, և տեսնելով որ ազգային ժողովէդ քուէարկեալ տրոց կանոնի ժողովէդ թէ՛ բաշխման և թէ՛ հաւաքման մասին ինչ ինչ բարեփոխութեանց պէտք ունի, փութաց նախ իւր հարկ դատած բարեփոխութիւններն առաջարկել Ազգա-

յին ժողովոյը, և այս մասին ժողովոյը հաւանութիւնն ստանալէ ետև, պէտք եղած հրահանգները պատրաստելով որչափ որ անոնց գործադրութիւնը փութացնել աշխատեցաւ, սակայն ժամանակիս անյաջող հանգամանաց պատճառաւ չկրցաւ յանձնաժողովոց օժանդակութեամբ ձեռք բերուելիք բաշխման ցուցակաց պատրաստութիւնները լրացնել տալ, այլ նոյն ցուցակներուն մէկ մասը միայն կրցաւ ձեռք բերել, իսկ մնացածներն ալ հետըզհետէ գալու վրայ են:

Աւստի Քաղ. ժողովս ստիպուեցաւ ներկայ տարուան համար առժամանակեայ Հաշուեկիւր մը շինել, յաջորդ սահմանադրական տարւոյն համար աւելի հիմնաւոր հաշուեկիւր մը պատրաստելու գիտաւորութեամբ, և ահա նոյն առժամանակեայ Հաշուեկիւրն՝ որպէս արդէն խոստացած էր, կուգայ մատուցանել Ազգային ժողովոյը:

Քաղ. ժողովս իւր Հաշուեկիւրը նախորդ Վարչութեան կողմէ ծրագրուած հաշուեկիւրին վրայ պատրաստած է: Նախորդ Վարչութիւնն արդէն Ազգային ժողովոյը 75 տարւոյ նոյեմբեր 7 ի նստին որոշմամբն ընդունած յանձնարարութեամբ համեմատ՝ ներկայ տարւոյս համար հաշուեկիւր մը ծրագրած ըլլալով, ներկայ Վարչութիւնս Տնտեսական խորհրդոյ և Ելևմտից հոգարարձութեան հետ խորհրդակցութեամբ նոյն ծրագրին վրայ կարևոր դատուած բարեփոխութիւնները սահմանելէ ետև ներկայ Հաշուեկիւրը պատրաստեց:

Ինչպէս որ պիտի տեսնուի, ներկայ Վարչութեանս Հաշուեկիւրին իւր նախորդին ծրագրէն ունեցած տարբերութիւնը հետեւեալ կէտերէն կը բաղկանայ.

Նախ՝ Հասութից կողմը երեք փոփոխութիւն միայն կը նշմարուի.

1. Ազգային սուրբն՝ որ 150,000 զը ենթադրուած է նախորդ Վարչութեան ծրագրին մէջ՝ 146,080 զըլ գումար մ'ալ Պիւտձէի բաց ցոյց տալով, մեր հաշուեկը լինի մէջ սնտուկին բոլոր բացը գո-

ցելու սահմանուած է, և այս պատճառաւ 280,804 զրշի բարձրացած է:

2. Վագֆի հասոյթն՝ որ 100,000 զրշ ենթարկուած է նախորդ վարչութեան ծրագրին մէջ, 80,000 զրշի զեղչուած է նոր Հաշուեկշտին մէջ, վասն զի ժամանակիս դրամական տագնապն՝ որ կալուածական առ ու ծախք դժուարացուցած է, կասպացուցանէ թէ այս տարի չպիտի կրնայ աւելի հասոյթ գոյանալ և անցեալ տարուան վրայ 20,000 զրշ պակաս պէտք է ենթադրել զայն:

3. Ազգային ժողովոյ ատենագրութեանց վաճառուած ենթադրուած 1500 զրշի հասոյթը բոլորովին ջնջուած է նորոգ կարգադրութեան մ'առթիւ, որ 'ի ստորեւ պիտի տեսնուի:

Իսկ մնացեալ հասոյթներն առանց փոփոխութեան նշանակուած են նոր Հաշուեկշտին մէջ, նախորդ ծրագրին համեմատ:

Երկրորդ՝ Ելից կողմը կերևի որ:

1. Արբաղան Պատրիարք հօր ամսական թոշակն ըստ առաջնոյն տարեկան 80,000 զրշ նշանակուած է, բայց իւր վրայէն առնուելով կառքին վերաբերող ծախքերն որք տարեկան 20,000 զրշի գումար մը կը կազմեն, Կեղր. սնտուկին վերագրուած և ընդհանուր ծախուց կարգն անցած են. վասն զի անցեալ 78 ղեկուեմբեր 1 ին Պատրիարքարանի մասակարարութիւնը դադրելով՝ Արբաղան Պատրիարք հօր 5000 զրշ ամսական սահմանուեր է, բայց նորին Արբաղութեան կառքին վերաբերեալ բոլոր ծախքերն՝ այն է կասպանաց թոշակ, ձիոց ու տեստի և կառքի կազմածոց ծախքն ամբողջ՝ որ ամիսն 2000ի մօտ գումարի մը կը հասնի, նոյն 5000 զրշ ամսականին վերագրուած է, որով Արբաղան Պատրիարքին՝ մասնաւորապէս իւր անձին և ընդհանրապէս իւր պաշտօնին բնութենէն բղխող ծախքերը հոգարու համար հազիւ 5000 զրշի գումար մը կը մնար:

2. Յանուն պաշտօնէութեան Պատրիարքարանի նախորդ վարչութեան կողմէ յատկացեալ 275760 զրշի գումարն 245,

484 զրշի զեղչուած է մեր Հաշուեկշտին մէջ. վասն զի տեսնելով որ Կեղր. սնտուկի վիճակն չներեր յանուն պաշտօնէից այնքան գումար վճարել՝ որքան նախորդ վարչութիւնը սահմանած և ըստ այնմ գործադրութեան սկսուած էր, Վարչութիւնս պարտաւորեցաւ պաշտօնէից ամսականաց վրայ ընդհանուր զեղչ մ'ընել անցեալ օգոստոս ամսէն սկսեալ, և այս կերպով ներկայ տարուոյ համար 50276 զրշի խնայողութիւն մը ձեռք բերած է: Եւ թէպէտ Վարչութիւնս այս վերջին օրերը Պատրիարքարանի բարեկարգութեան մասնաժողովոյ ծրագրին համեմատ պաշտօնէից մասին նոր կարգադրութիւն և ըստ այնմ ամսականաց բաշխում՝ ընելու ստիպուած էր, սակայն այս բաշխումն երբէք իւր հաշուեկշտին մէջ նշանակուած 245484 զրուշի զեղչեալ գումարն անցած չէ, այլ նոյն զեղչման սահմանին մէջ գործադրուած է:

3. Եկտի գուէլի Ս. Յակոբայ հիւրանոցին համար նախորդ վարչութեան կողմէ սահմանուած 1000 զրշ ամսականը կիսովին զեղչուելով, տարեկան 6000 զրշ նշանակուած է նոր հաշուեկշտին մէջ. վասն զի այս հիւրանոցը հաստատուելէն մինչև ցարդ հազիւ մէկ երկու հիւր գացած են հոն, և խիստ ծանր է Կեղր. սնտուկին 1000 զրշ հասուցանել այս նըպատակին համար:

4. Յանուն կարտուելոց նշանակուած 5000 զրշի գումարը նախորդ տարիներու համեմատական հաշուով չափազանց երկնաղուն պատճառաւ 5000 զրուշի զեղչել պատշաճ դատուած է:

5. Թղթատարի անուամբ նշանակուած 12000 զրշի գումարը 10000 զրշի զեղչուած է նոր կարգադրութիւն մ'եղած ըլլալուն համար:

6. Ազգ. ժողովոյ ատենագրութեանց տպագրութեան գործն ազգային լրագրատի մը յանձնելու կարգադրութիւն եղած ըլլալով, 10000 զրշի խնայողութիւն մը ձեռք բերուած է:

7. Տումարոց փոխադրութեան ծախքը

2000 զրշէն 1500 զրշի զեղչուած է այս մասին նոր կարգադրութիւն մ'ըլլալու պայմանաւ:

8. Պաշտօնական յարաբերութեանց ծախուց համար նախորդ վարչութեան ծրագրին մէջ նշանակուած 25500 զրշի գումարն անբաւական համարուելով, սոյն գլխոյն՝

Ա. Յօդուածին մէջ նշանակեալ Ս. Պատրիարք Հօր յարաբերութեան ծախուց գումարը 15000 զրշէն 28000 զրշի բարձրացնել պատշաճ դատուած է:

Բ. Բարապանաց երթեւեկի համար նշանակուած 6000 զրշի գումարը 4000 զրշի զեղչուած է:

Գ. Բ. Դրան սպասաւորաց յատկացեալ տօնական պարգևի գումարը 4500 զրշէն 5000 զրշի զեղչուած է:

Դ. Բ. Դրան գործակատարի սենեկապանին յատկացեալ 1800 զրշն անփոփոխ պահուած է:

Եւ այս կերպով յարաբերութեան գըլխոյն յատկացեալ գումարը 25500 զրշէն 56800 զրշի բարձրացած է Ազգային ժողովոյց այն որոշման համաձայն, որով իւր անցեալ տարուան փետրվար 27ի նստին մէջ 500 ոսկւոյ վարկ մը քուէարկած էր Կեղր. սնտուկին վրայ սոյն յարաբերութեան ծախուց համար:

9. Պատրիարքարանի կարասեաց և նորուգութեան համար նախորդ տարիներէն աւելի ծախք չընելու որոշմամբ՝ նախորդ հաշուեկշտին մէջ նշանակուած 15 հազար զրուշն 7500 զրուշի զեղչուած է:

10. Նոյնպէս բարապանաց հանդերձագնոյ համար նշանակուած 6500 զրուշի գումարը՝ նախորդ տարիներու համեմատական հաշուով չափազանց թուելուն՝ 5000 զրուշի զեղչուած է:

11. Յանուն զանազան մանր ծախուց նշանակուած 9000 զրուշի գումարն ալ ըստ որում ստուգուած է որ մեծագոյն մասամբ նորոգութեան ծախուց տեսակին կը վերաբերին, 2500 զրուշի զեղչուած է:

12. Իսկ կեղրոնական տրոց տասաւորդին գումարը փոխանակ 10000 զրուշի՝

28000 զրուշ ենթադրուած է՝ 280000 զրուշ հաւաքելի տրոց գումարին համեմատութեամբ:

Եւ այս եղանակաւ ծախուց ընդհանուր գումար նշանակուած է 575704 զրուշ 294900 զրուշի մտից դէմ, որով ներկայ տարուոյ բացն ենթադրուած է 280804 զրուշ, որ պէտք է գոցուի ազգային տրոց արդիւնքով:

Արդ՝ ինչպէս որ այս մանրամասն բացատրութիւններէն յայտնի է, ներկայ առժամանակեայ հաշուեկշտին մէջ ոչ միայն Վարչութեան ստիպողական և փափուկ պիտոյքներն ըստ կարելոյն հոգացուած են խնայողութեան սահմանին մէջ, այլ և Կեղր. սնտուկի վիճակին յարմար ուղղութիւն մը տրուած է ծախուց և թէպէտ նախորդ Վարչութեան ծրագրին մէջ ենթադրեալ բաց գումարն՝ որ 146080 զրուշի կը հասնի, չհամապատասխաներ ներկայ Վարչութեանս կողմէ ենթադրուած բաց գումարին՝ որ է 280804 զրուշ, սակայն պատճառն այն է որ Վարչութիւնս տրոց հասոյթը մտից կարգէն 'ի բաց հանելով՝ ինչպէս 'ի վերեւ յիշատակուած է, բոլորովին պիւտձէի բացը դիմաւորելու յատկացուցած է զայն, և կը յուսայ որ տրոց հասոյթն արդիւնաւորելու համար Տնտես. խորհրդոյ ձեռք առած նոր միջոցներուն օժանդակութեամբն ու յարատուութեամբը պիտի յաջողի նոյն հասոյթի ազդիւրն ըստ կարելոյն առատացնել և հաշուեկշտին այդ բացը դիմաւորել, այնպէս որ յառաջիկային համար պարտք մը չգոյանայ:

Վարչութիւնս Տնտես. խորհրդոյ և Ելեմտից հոգաբարձութեան գործակցութեամբ պատրաստած իւր այս առժամանակեայ հաշուեկշտն Ազգային ժողովոյ ներկայացնելով, պիտի փութայ նաև յառաջիկայ 77-78 տարուոյ հաշուեկշտին պատրաստութեանը ձեռնարկել և Ազգային ժողովոյց վիճաբանութեանն ու քուէարկութեանը յանձնել, և պիտի ջանայ որ սոյն հաշուեկշտն Ազգին նիւթական և բարոյական ամեն պիտոյք իր մէջ պատրաստուի:

բունակելով՝ աւելի հիմնաւոր և կատարեալ լինի. սակայն պատկառելի ժողովոյդ խորախուսին և օժանդակութեանը կը կարօտի իւր այս դիտարութեանց մէջ յանդերձ համար և հաւատարմէ որ պիտի ստանայ դայն :

Յ մարտ 1877 Մնասք յարգանքով ի դիմաց Քաղ. ժողովոյ Ազգ. վարչութեան

Ատենադպիր փասն Ատենապետի Յ-Է-անէ-Պոյ-ճե-ն Յ-Է-Ք Նոր-հասկէ-ն

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Գիտէք որ Պիւտճէն երկուք կըլլայ. մէկը կանխաւ կառավարելու, որ բնականաբար ենթադրութեան վրայ հիմնուած կըլլայ, իսկ միւսը տարին բոլորելէն ետե իրրեւ ամբողջացուցիչ Հաշուեկէլիտ կը ներկայացուի, և հաշիւները կը դոցուին : Մեր Քաղ. ժողովը 76-77 տարւոյն՝ որ ամիսէ մը կը լրանայ, ըսել է լմնցած տարւոյ մը պիւտճէն կը բերէ, և այնպիսի պիւտճէ մը, որ պէտք էր ի սկզբան տարւոյն բերուէր, որպէս զի հիմա՝ ալ ամբողջացուցիչը գարբայց ասոր յանցանքը մերը չէ. մեք որչափ ալ ուզեցինք թախանձեցինք որ Պիւտճէն կանուխ գայ, չեկաւ և այսօր հազիւ եկաւ. սակայն ըստ որում Քաղ. ժողովը խտտում կընէ իւր տեղեկագրին մէջ յաջորդ տարւոյն պիւտճէն ժամանակին բերել, ուստի ներկայ պիւտճէն կը յղենք ըստ օրինի համարակալութեան գիւանին, որպէս զի նախաքննութեան առնելով պակաս կէտերը լրացուցիչ տեղեկագիր մը բերէ մեզ ի սկիզբն յաջորդ տարւոյ, զի այս վիճակին մէջ ամենակատարեալ կերպով պակասաւոր է :

ՂԱԶԱՐՈՍԻԱՆ Ք. ԷՖ. — Ասիկայ իբր հաշուեցոյց նշանակեցէք և ոչ իբր պիւտճէ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Համարակալութեան գիւանին յղուիլը չենք ընդունիր. փասն զի եթէ այս նիստը վերջին համարելով ժողովն այսօր իւր ատենական շորջանը փակէ, Համարակալութեան գիւա-

նին պաշտօնն ալ կը լրանայ. ուստի քննիչ յանձնախումբը կառավարելով :

ԻԹԻԻՃԵԱՆ Յ. ԷՖ. — Կը ձայնակցին ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս՝ կը ձայնակցիր, առանց գիտնալու թէ ի՞նչ բանի. եթէ այսօր ատենական շորջանն փակուի, դարձեալ այն գիւաններն՝ որ ունինք, պէտք է շարունակեն իրենց պաշտօնը՝ մինչև նոր գիւանաց կազմութիւնը, որ երկու ամիսէն հազիւ կընայ տեղի ունենալ : Եթէ մեք նախաքննութեան յղելիք խնդիրն փոխանակ մեր ունեցած գիւանին յանձնելու՝ փոփոխեան էֆէնտի ըսածին պէս՝ նոր յանձնախումբ մը կազմենք և անոր քննութեանն յանձնարարենք, կը հետեի որ փոստն չենք մեր գիւաններուն վրայ. այս ալ ձրի անվրտահութիւն մըն է, որ չեմ ընդունիր :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Կը յիշեցնեմ, Ատենապետ փաշայ, ներկայ բացման Բնասին մէջ երբ Ձեր վսեմութիւնն առաջարկեց Պիւտճէի խնդիրն յանձնախումբի մը յանձնել, ևս էի որ փոխանակ յանձնախումբի նոյն խի Համարակալութեան գիւանին գործն է այս ըսելով՝ առաջարկեցի և ժողովս ալ ընդունեց, որ Համարակալութեան գիւանին յանձնուի նախորդ վարչութեան Պիւտճէն քննել և նոր գալիք վարչութեան կարծիքն առնելէ ետե բերել ժողովիս ի վաւերացում : Բայց Համարակալութեան գիւանը մինչև հիմայ չգործադրեց իրեն յանձնուած այս պաշտօնը. ուստի յատուկ քննիչ յանձնախումբ կառավարելով :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անցեալ տարւոյ վերջերը նախորդ վարչութիւնը Պիւտճէ մը բերած էր զոր մեք նախաքննիչ գիւանին տեղեկագիրն առնելով մերժեցինք՝ առաջիկային համար ի սկիզբն տարւոյ նոր պիւտճէ մը պատրաստելու յանձնարարութեամբ. սակայն նախատեսելով որ նոր կազմուելիք վարչութիւնը պիտի չը կարողանայ ժամանակին ներկայել մեզ այս տարուան պիւտճէն, առաջարկեցի որ մասնաւոր խումբ մը որոշուի յերևալու-

խանաց և անոր յանձնուի կանխաւ քննել Ազգին Ելեմոցի վիճակը և ոչ-ճէ մը պատրաստել և անոր վրայ նոր վարչութեան կարծիքն և հաւանութիւնն ալ առնելով Ազգային ժողովիս բերել ի քննութիւն և ի վաւերացումն :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Նոր գալիք վարչութեան կարծիքն առնելով հանդերձ պատրաստուած պիտի ըլլար պիւտճէն. այսպէս էր ժողովին որոշումը. կարդացէք նոյն Բ. նստի ատենագրութիւնը :

(Այս միջոցին Ատենադպիր էֆէնտին կարդաց Բ. նստի ատենագրութեան «Բնարութիւն Ելեմոցի յանձնախումբի» անունով հատուածն սկիզբէն մինչև ցլերջն) :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — (Նոր-հասկէ-ն) Ահաւասիկ կը տեսնէք՝ Ատենապետ փաշայ, որ միևնոյն Համարակալութեան գիւանն է որու յանձնուեր է անցեալ տարի այս գործն և չէ կատարեր մինչև ցարդ, և զուք հիմա նորէն անոր յանձնել կուզէք. ևս վստահութիւն չունիմ անոր վրայ, նոր յանձնախումբ մը որոշենք և անոր յանձնենք այս գործն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Յանձնախումբը առաջարկողն ևս էի, զոր զուք չընդունեցիք այն ատեն. բայց պարագաներն ալ ի յուշ ածենք. անկէ առաջ նախորդ վարչութեան պիւտճէ մը եկած էր մեզ, զոր մեք ոչնչացուցինք «պէտք չէ» ըսելով և առաջիկային համար պիւտճէ մը պատրաստել յանձնարարեցինք նորընտիր համարակալութեան գիւանին. և որովհետեւ Մամիկոնեան էֆէնտին առաջարկեց նոյն միջոցին թէ հրաժարեալ վարչութեան համարատուութիւնը տեսնուելէ ետե պէտք եղածը անօրինուի պիւտճէի մասին, այն ալ ընդունեցինք. բայց նախ չգիտեմ թէ համարակալութեան գիւանը որուն յանձնուեցաւ պիւտճէի խնդիրը, նոյնն է որ կը շարունակէ ցարդ :

ՉԱՅՆԵՐ. — Այո՛, նոյն օրն ընտրուեցաւ նաև համարակալութեան գիւանն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եւ միթէ Քաղ. ժողովն անոր տուա՞ւ պիւտճէն որ քննէ-

և եթէ տուաւ, ինչո՞ւ չքննեց. համարակալութեան գիւանի անդամք ներկայ ըլլալու են որ պատասխանեն և պատճառները յայտնեն. քանի որ այսօր բացակայ են՝ չենք կրնար առանց զիրենք բերու գատատան ընել կամ անվստահութիւն ցուցնել անոնց վրայ :

Տ. ԱՄԲԲՈՍԻՈՍ ՎՐԳ. — Ազգային ժողովս իւր գիւաններուն վրայէն վստահութիւնը չվերցնելով՝ ատեն ատեն յանձնախումբեր կարգած է ի պահանջել հարկին զանազան խնդրոց կարգադրութեանը համար. ասոնց մէջ նշանաւորն է Հարստահարութեան խնդիրն, որ բոլոր Երեսօթիսանաց խղճին վրայ ծանր բեռ մ'եղած ըլլալուն՝ նախաքննութեան գիւանին չյանձնելով՝ յատուկ յանձնախումբի մը յանձնուեցաւ, որ մէկ շարթուան մէջ իւր պաշտօնը կատարեց և ընդարձակ տեղեկագիր մը բերաւ : Այս կարգէն է նաև պիւտճէի խնդիրն ալ. մինչև ցարդ օրինաւոր պիւտճէ մը չէ կըրցած պատրաստուիլ և վաւերացուիլ ժողովս. անցեալ տարի երեսօթիսաններէն մին՝ չեմ յիշեր անունը՝ շատ իրաւամբ առաջարկած էր որ Ազգային ժողովս ինք պիւտճէ մը չինէ և յանձնէ վարչութեան : Եթէ Հայաստանի հարստահարութեանց խնդիրը խղճերնուս ծանր գալուս համար յանձնախումբի մը պէտքը տեսնուեցաւ, յանձնախումբ մ'ալ պիւտճէին համար պէտք է, փասն զի ևս իբրև եկեղեցական թէ և մասնաւորապէս և ի մօտոյ տեղեկութիւն չունիմ, սակայն ի հետուս կը գիտեմ որ մեր ազգային սնտուկն ալ հարստահարեալ եմ կողաղակէ. ասիկա խղճիս դուշելուն համար կըսեմ թէ յանձնախումբ մը պէտք է որ քննէ Պատրիարքարանի սնտուկին հարստահարեալ վիճակը և օրինաւոր պիւտճէ մը չինելով բերէ ժողովիս ի վաւերացումն : Անցեալ տարի նախորդ վարչութիւնը և համարակալութեան գիւանը պաշտօնն առին այս ժողովէն պիւտճէ մը չինելու, բայց մինչև ցարդ իրենց պաշտօնը չգործադրեցին. ներկայ վարչութեան ատենապետ Ապրօ

էֆէնտին խոստացաւ պիւտճէ մը բերել . տարի մ'ալ սպասեցինք , այս խոստումներուն վերջը չեկաւ . ահաւասիկ տարեկան շրջաննիս աւարտելու վրայ է և նոր տարեգլուխ մ'ալ կուգայ . մինչև ե՞րբ այս խոստումներուն համբերենք . ալ ժամանակն է որ այն երեսփոխանին առաջարկութեան համեմատ՝ որոյ անունը չեմ յիշեր ըսի , ժողովն ինք պիւտճէ մը չինէ և տայ վարչութեան գործադրել : Յաւ է մեզ՝ որ ներկայացեալ այս պիւտճէին մէջ դաստիարակութեան պիտոյից համար բառ մ'անգամ չկայ , հակառակ այն խել մը խնայողութեանց՝ զորս կը նշանակէ վարչութիւնն իւր տեղեկագրին մէջ . ես կըսեմ թէ այն երեք հարիւր ոսկւոյ վարկը՝ զոր քուէարկեցինք մեք անցեալ տարի Սրբազան Պատրիարքի յարաբերութեան ծախուց համար , պէտք չունի այս տարի , և յատկացնենք զայն դաստիարակութեան : Արի խնայողութիւններն ևս ձեռք առնելով՝ Պատրիարքարանի ծախքը կարծենք որքան որ հնար է , և դաստիարակութեան մեծ պիտոյքը տնտեսենք , որու համար ի՛նչ գումար ալ սահմանենք՝ քիչ է : Ասոնք ընելու համար՝ ճիշդ Ատենապետ փառային տարույս սկիզբը առաջարկած ելևմտից յանձնախումբը կառաջարկեմ , առանց վարչութեան կամ համարակալութեան դիւանին ընելիքներուն սպասելու , որոց խոստումներէն և ոչ մին օրինաւորապէս կատարուած է մինչև ցարդ , և առանց անոնց վրայ անվստահութեան ցոյց մը ըրած համարուելու , ընտրենք յանձնախումբ մը այնպիսի անձինքներէ՝ որոնք վարչական պաշտօններ վարած և փորձառութիւննին ճանչցուած է , և առանց յանձնենք՝ որ մէկտեղելով օրինաւոր պիւտճէ մը չինեն և բերեն ժողովիս , և յետ վաւերացման տանք զայն վարչութեան յառաջիկայ տարուոյ շրջանին մէջ գործադրելու համար : Ահա՛ այս է մեզ համար ամենէն կարուկ ընթացքը , եթէ չեմք ուզեր այլ ևս վարչութեան խոստումներուն սպասելով սպասելով՝ յուսակտուր ըլլալ :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Շատ լաւ կը խօսիք , Հայր սուրբ , բայց կարծեմ թէ նախ վարչութեան ներկայութեան Ձեր ըսած զանցառութիւններուն վրայօք իրմէ բացատրութիւն առնելու և յետոյ պէտք եղածը տնօրինելու ենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըստ որում ատենական գործողութեան կը վերաբերի պիւտճէի խնդրոյն նախարանութիւնը , պարզապէս՝ Ատենապետութեան հետեւելով կը պարտաւորինք յղել զայն Համարակալութեան դիւանին . մանաւանդ որ այս պիւտճէն զայլք տարուոյ ալ չվերաբերիր , այլ անցեալ տարուոյն ըլլալով՝ առաւել հաշուեցոյցի քան թէ պիւտճէի կերպարանք ունի : Այս պատճառաւ վիճարանութեան դնելու ալ հարկ չկար , բայց ես թոյլտուութիւն ըրի և տեսայ որ զանազան առաջարկութիւններ կըլլան , այնպիսի ձևերու տակ՝ որ անվստահութիւն կենթադրեն վարչութեան և նոյն իսկ Համարակալութեան դիւանին դէմ , որոյ անդամք ներկայ չեն այսօր , և թերևս այնպիսի բացատրութիւններ ունին տալիք , որ մեզ ամենքս կը գոհացնեն : Աստի ներելի չէ ՚ի բացակայութեան որ և է պաշտօնէի ըրածը դատաքննել . թընամանաց ստուերէն անգամ հեռանալ և զգուշանալ պարտ է ամենուս . թէպէտև խօսուածները մէկիկ մէկիկ զատենք նէ ուղղակի թշնամական բառ մը չենք գրաներ բնաւ մէկուն մէջ , սակայն ողբոյն մէջ թշնամանք կը նկատուի : Աստի կը գոցեմ այս միջադէպը և ամեն պատասխանատուութիւն վրաս առնելով ըստ կանոնի կը յղեմ այս պիւտճէն մեր Համարակալութեան դիւանին ՚ի նախարանութիւն . իսկ առաջիկայ տարուոյ համար եթէ առաջարկութիւն մ'ունեցող կայ , պէտք է որ գրով մատուցանէ :

7.

Յ ՏԵՂԵԿ՝ ԳԵՂ՝ Կ՝ ԵՂ՝ ԵՂ՝ ԵՂ՝

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Նախընթաց նիստէն քանի մը հարցումներ կային վարչութեան յղուած , որոց մէկը կրօնական

ժողովոյ յղուած էր և միւսները Քաղաքականին : Ասոնց պատասխաններն եկած են թէ և , սակայն ներկայացնողներն հոս չեն՝ որ ՚ի հարկին պատասխանելու կամ բացատրութիւններ տալու կարող ըլլան . ուստի կառաջարկեմ որ առանց ընթեռնելու ատենագրութեան մէջ միայն անցնին՝ յառաջիկային մէջ՝ նկատողութեան առնուելու պայմանաւ . և մենք անցնինք Օրակարգին՝ որ է Գաստիարակութեան խնդիրը : Սակայն ժամը ց է արդէն . քիչ ժամանակ ունինք Օրակարգի խնդրովն զբաղելու համար . եթէ այս նիստն ատենական շրջաննուս վերջինը պիտի ըլլայ , այժմէն որոշենք՝ որպէս զի գիտնանք ընելիքնիս և ըստ այնմ վարուինք :

ՁԱՅՆԵՐ. — Միթէ յառաջիկայ ուրբաթօր նիստ մ'ալ չենք կրնար ընել իբր վերջին նիստ տարեկան շրջաննուս :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Յառաջիկայ շաբթուն ծաղկազարդի տօնն ըլլալով՝ եկեղեցականք զբաղեալ կըլլան . եթէ ժողովը կը հաճի , այս նիստով տարեկան շրջաննիս 20 նիստ համարելով փակենք և մայիս 6ին նորէն բանանք ըստ կանոնագրութեան :

ՄԷԼԻԻՒՅԱՆ Մ. ԷՖ. — Կառաջարկեմ որ յառաջիկայ ուրբաթ նիստ մ'ալ ընենք իբրև վերջին նիստ տարեկան շրջաննուս , դաստիարակութեան խնդիրը ձեռք առնելու համար , և յառաջիկայ տարեկան բացումէն առաջ դաստիարակութեան խնդրոյն մէջ մտած ըլլանք :

ՓԱՓԱՉԵԱՆ Ս. ԷՖ. — Եթէ յառաջիկայ շաբթուն կարենայինք նիստ մ'ալ ընել , շա՛տ լաւ . բայց որովհետև չալիտի կրնանք , անցնինք անմիջապէս Գաստիարակութեան խնդրոյն՝ քանի որ դեռ ժամանակ ունինք ատենանի փակման համար , և եթէ կարելի է՝ որոշեալ ժամէն քիչ մը ետք կը փակենք ատենանը , Գաստիարակութեան խնդրոյն մէջ քիչ շատ յառաջ երթալու համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսինք թէ վարչութեանէն եկած պատասխաններն առանց

կարդալու այսօրուան ատենագրութեան մէջ անցնին . ասոր վրայ դիտողութիւն մ'ընող չեղաւ . ըսել է թէ այս որոշուած և վերջացած է :

Կանցնինք ուրեմն Օրակարգին , որ է Գաստիարակութեան խնդիրն , որով մինչև և կանոնական ժամանակն զբաղելէ ետև տարեկան շրջաննուս փակումը կը կատարենք :

ԲԱԶՄԱԹԻԻ ՁԱՅՆԵՐ. — Այո՛ , այո՛ :

Ահաւասիկ վարչութեանէն եկած Յ տեղեկագիրներն .

Ա.

Վսեմափայլ Ատենապետ փառա Սեդային ժողովոյ .

Ազգային ժողովոյ վերջին փետրվար 25 ի նստին մէջ երեսփոխան Փափագեան Ստեփան էֆէնտին՝ Բերայի Հայ հրկիզելոց համար օղնութեան մասնաժողովի ձեռք մատակարարուած նպաստից գումարին քանակութեան և բաշխման հաշուոց առթիւ հարցումներ ընելով , առաջարկած էր որ նոյն հաշիւները Ազգային ժողովոյ ներկայացուին : Հետևարար ազգային ժողովոյ սոյն առաջարկութիւնն յղած էր աս Քաղ. ժողովն ՚ի տնօրէնութիւն :

Քաղաքական ժողովս սոյն առաջարկութիւնն ՚ի նկատի առնելով , Պատրիարքարանի դիւանական արձանագրութեանց դիմեց պէտք եղած լոյսը քաղելու համար , և տեղեկացաւ որ 1870 տարուոյ մէջ պատահած Բերայի հրկիզութենէն քանի մի օր վերջը՝ Գանձուց նախարարին նախագահութեան ներքև կազմուած համագոյցային յանձնաժողովոյ անդամակցելու համար Բ. Գուռը յատուկ ծանուցագրով մը երկու ազգային երեւելի անձանց անունը խնդրած է , և նոյն ատեն՝ Սրբազան Պատրիարքն ալ ժամանակին Քաղ. ժողովոյ Ատենապետին հետ խորհրդակցութեամբ Նորատուհեան Յակոբ և Մանուկեան Սենեքերիմ էֆէնտիները ցոյց տուած է իբրև ազգին վստահութեան արժանաւոր անձինք : Սակայն նոյն յանձնաժողովոյ կազմութեան պայ-

մաններուն և հաւարուած նպաստից մատակարարութեան մասին Քաղ. ժողովս որ և է ծանօթութիւն չկրնալով գտնել դիւանական արձանագրութեանց մէջ, ըստուգեց որ այս գրամական գործողութեանց հոգն ու համարաութիւնը նոյն համազգային յանձնաժողովն իրեն վերապահած և իւր հսկողութեան ներքե կատարած ըլլալով, այս մասին որ և է պատճառական կամ անպաշտօն յարարութիւն կամ բանակցութիւն տեղի չէ ունեցած կառավարութեան և Ազգ. վարչութեան մէջ տեղ, և Պատրիարքարանի մասնակցութիւնն այս պարագային մէջ ուրիշ բան չէ եղած, բայց եթէ երկու անձինք ներկայացնել յանդամակցութիւն յանձնաժողովոյն, ճիշդ այն կերպով՝ որով մասնակցած են նաև ուրիշ ազգաց Պատրիարքարաններն ու բոլոր դեպքանատուները:

Հետևապէս Քաղ. ժողովս՝ 1870 թըւականէն ՚ի վեր իրարու յաջորդող վարչութեանց նման՝ կառավարութեան անմիջական հսկողութեան ներքե կատարուած այսպիսի գործողութեան մը մասին որ և է համարաութեան պարտաւորութիւն մը իրեն չվերագրելով, այս խընդրոյն ոչ միջամտած է և ոչ միջամտել հարկ կը համարի:

10 մարտ 1877 Մնամք յարգանք
ի դիմաց Քաղ. ժողովոյ
Ազգ. վարչութեան
Ատենադպիր վասն Ատենապետի
Յովհաննէս Պոյաճեան Յովհաննէս Էսէան

Վսեմափայլ Ատենապետ փառա Ազգային ժողովոյ.

Ազգային ժողովոյ վերջին փետրվար 25 ի նստին մէջ երեսփոխան Փափազեան Ստեփան էֆէնտին յայտնելով թէ Կեդրոնական ուղղակի տրոց անունով վարչութեան կողմէ հրատարակուած նոր հրահանգին մէջ Ազգային ժողովոյ հաստատած տրոց կանոնագրին հակառակ երկու կէտեր նշմարած է, առաջարկած էր

որ անոնց վրայօք Քաղ. ժողովէն բացատրութիւն խնդրուի:

Յիշեալ երկու կէտերն են՝

Ա. Քաղաքական գործոյ մը համար Պատրիարքարան կամ Քաղ. խորհրդոց ղիմող ազգայինէ մը տակաւին անվճար թողուած ու դիզուած տուրքերը պիտի առնուին, կըսէ. — և կանոնագրին սակական պայմանները զանց առնուած են, որք են որքն ըրացած և երէտ անգամ որքն բայց տակաւին անվճար թողուած:

Բ. Երեսփոխանական ընտրութեան մասնակցողաց տուրքը ըստ 65 թղ. յօդուածոյ Ազգային Սահմանագրութեան 2-րդ և 3-րդ պիտի առնուի, կըսէ, — որ չկայ տրոց կանոնագրին մէջ:

Ազգ. վարչութեան Քաղ. ժողովն՝ Ազգ. ժողովէդ յիշեալ սոյն առաջարկութեան գիրը նկատողութեան առնելով, ՚ի պատասխան կը յայտնէ Ա. կէտի մասին թէ՛ Քաղ. ժողովն ըստ որում իւր կողմէ վերջին անգամ առաջարկեալ և Ազգ. ժողովէդ որոշեալ տրոց կանոնագրին բարեփոխութեանց համաձայն՝ տրոց բաշխման և հաւարման դիւրութեան համար պէտք եղած միջոցներն ՚ի գործ դնելու արտօնութիւն ստացած էր, ուստի և ըստ այնքն նոյն անօրէնութիւնն ըրած է, ինչպէս կերևի իւր հրահանգին մէջ, և Բ. կէտի մասին թէ՛ քանի որ Սահմանագրութեան 65 թղ. յօդուածը կը պահանջէր զայն, եթէ Ազգ. ժողովոյ քննութեան յանձնեալ կանոնագրի ծրագրին մէջ պակասած էր այն, Քաղ. ժողովն այս անգամ իւր հրահանգին մէջ յաւելցնելովն ուրիշ բան ըրած չէ, բայց միայն նոյն պակասը լրացուցած:

10 մարտ 1877 Մնամք յարգանք
ի դիմաց Քաղ. ժողովոյ
Ազգ. վարչութեան
Ատենադպիր վասն Ատենապետի
Յովհաննէս Պոյաճեան Յ. Պ. Նորասէնէ

Ամենապատիւ Արքայան Հայր Նախագահ Ազգ. երեսփոխանական ժողովոյ.
Ազգային երեսփոխան Մեծ. Քրիստ.

տասուր էֆ. Ղազարոսեանի ստորագրութեամբ պատկառելի Ազգային ժողովոյդ ուղղեալ հարցադիրն՝ նոյն ժողովոյ դիւանին կողմանէ դրկուեցաւ Կրօնական ժողովոյ, որ պատասխանէ: Եւ ահաւասիկ:

Կը հարցուի.

Ա. թէ ճշմարիտ է յիշեալ Արքայան Կաթողիկոսի (Աղթամարայ) այսպիսի շնորհարաշխութիւնը (մէկ քանի կրօնականներու՝ խաչ կրելու կոնդակ շնորհած ըլլալը):

Ա. այս կը պատասխանէ Կրօն. ժողովս, թէ ո՛չ ՚ի պաշտօնէ, այլ ի լրոյ գիտէ, որ Աղթամարայ Տ. Խաչատուր Ա. կաթողիկոսը Կ. Պօլսէն մեկնելէն յառաջ եկեղեցականաց ոմանց խաչ և ոմանց խաչ կրելու կոնդակ ստացած է:

Բ. թէ այս մասին Արարատայ Մայր-Աթոռոյ ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հաճութիւնը և կամ թոյլտուութիւնը նախապէս առնուած է:

Կրօն. ժողովս այդ մասին բնաւ տեղեկութիւն չունի՝ ո՛չ հաճութիւն առնուած և ո՛չ չառնուած ըլլալուն նկատմամբ, ինչպէս նաև չգիտէ թէ Արարատեան Մայր-Աթոռոյ Վեհ. Հայրապետն ու Աղթամարայ Ամեն. Տ. Խաչատուր Արքայան կաթողիկոսն իրենց մէջ համաձայնութիւն գոյացուցած են այս մասին թէ ոչ:

Գ. թէ՛ եթէ այսպիսի հրաման մը Վեհ. Հայրապետէն չէ առնուած, Կրօն. ժողովն ի՞նչ ըրած էր այս դէպքին համար:

Ասոր ալ կը պատասխանեմք, թէ Կրօն. ժողովս այս մասին պաշտօնական տեղեկութիւն մը չունենալով՝ ու և է տնօրէնութիւն մը չէ ըրած: Մանաւանդ երբ կը յիշէ, թէ գոնէ հոգելոյս Տ. Յակովբ Ա. Պատրիարքի օրերէն սկսեալ՝ մասնաւոր կաթողիկոսներ՝ ինչպէս նաև Ս. Երուսաղէմայ և Կ. Պօլսոյ Պատրիարքներէն ոմանք՝ այլ և այլ ժամանակաց մէջ մեր եկեղեցական եղբարց ոմանց այլ և այլ շնորհարաշխութիւններ ըրած են, որոց

համար ցարդ ո՛չ խնդիր եղած է և ո՛չ դիտողութիւն:

Կրօն. ժողովս չէր համարձակեր իւր նկատողութեան առարկայ ընել այն բանը, զոր իւր նախորդներն նկատողութեան չէին առած, և որոյ սկզբնաւորութիւնն իւր օրերուն մէջ ծագումն առած չէր:

7 մարտ 1877 Ազգ. ժող. մնամք յարգանք
ի դիմաց Կրօն. ժողովոյ
Ատենադպիր Ատենապետ
Յովհ. Վ. Այս. Խորէն Եպիսկոպոս
Փովհաննէս Միսէնթեան

ՕՐԱԿԱՐԳ

Տեղեկութիւն Գործարարական Կոմիտէի Վերջին Վերջին Գործարարական Կոմիտէի Խնդրոյն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքն Օգոստէն է. Ֆէնտիին է, ըստ որում առաջին խօսքն ուղած է Օրակարգին վրայ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Այո՛, խօսք ուղած եմ և բաւական երկար պիտի խօսիմ. դժբաղդաբար մեր Կանոնագրութեան մէջ պակաս կէտ մը կայ՝ որ ժամանակին չէ նշմարուած, այն է ատենական գործողութեանց կամ միջանկեալ խնդրոց համար ժամանակակէտ որոշուած չըլլալը, որոյ հետեանօք մեր բուն խընդիրներն անպայման կերպիւ ետ կը մընան. բայց ի՞նչ որ է նէ, որովհետև դաստիարակութեան վրայ առաջին խօսքն առած եմ, պէտք է որ խօսիմ, թէ և քիչ մը երկար է խօսելիքս:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — (Ընդհընդ) Ատենաբաննիս կըսէ թէ երկար պիտի խօսիմ. քանի որ երկար պիտի խօսի, և ժամանակնիս կարճ ըլլալով մեք պիտի չը կրնանք իմաստասիրել իր խօսքերը կամ առաջարկութիւնները քննել, ուրեմն առեւ լի լաւ է որ դրաւոր առնենք ատենախօսութիւնը և ատենագրութեան մէջ տակաւ տալով կարգանք:

ՉԱՅՆԵՐ. — Արդէն գրի առած է և պիտի կարդայ. թող սկսի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մեք Վարչու-

թեւեռն եկած գրեթե համար ժամանակներս ու է ըսելով արժան դասեցինք առանց կարգալու ատենագրութեան մէջ տպել տալ . միևնոյն բանին համար երկու կշիռ գործածել կրնա՞յ մի ըլլալ : Եթէ Օգոսէն էֆէնտիի ատենագրութիւնը պիտի կարգացուի , առաջ վարչութեան գրեթե պէտք է կարգալ : Եթէ ժամն 9 1/2ին խնդիրը բանալ և միանգամայն վճարել կարելի ըլլար , ես ալ ձեզ համամիտ կըլլայի . բայց գիտեմ որ միայն Օգոսէն էֆէնտիին մտիկ պիտի ընենք և ո՛չ այլ ինչ . ասով Գաստիարակութեան խնդիրը լուծուած չըլլար , ոչ ալ այսօր մտիկ չընելովնիս խնդիրն ետ ձգած կրնանք համարուիլ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պիտի լսենք , պիտի խօսինք , պիտի որոշենք , մնալով մինչև ժամ 12 :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ ձեր կարծիքն է . իմ կարողութենէս վեր է մինչև ժամը 12 կենալ աստ , և կարծեմ ուրիշներ ալ կան ինձ վիճակակից . կը հարցընենք ժողովին՝ կո՞ւզէ մինչև ժամը 12 նստիլ . այսու ամենայնիւ անկարելի եղած բանի մը համար մեր զմեզ չխարենք :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — (է քէֆ) Ատենանը չկրնար փակուիլ . քանի որ ինձ խօսք տուիք , իրաւունք ունիմ 2-5 օր խօսիլ . փակեալ է չըլլար :

(Աղմուկ)

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Խօսք կուզեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անօգուտ է մեր վերջին նստին այսպիսի խնդրոյ մը սկսիլ , քանի որ չպիտի կրնանք ըմնցնել :

ՉԱՅՆԵՐ. — Օգոսէն էֆէնտիի խօսքը լսել կուզենք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հրամայեք Օգոսէն էֆէնտի :

ԽՕՃԱՍՍՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ահա խնդիր մը՝ որու երկար տարիներէ ՚ի վեր կը բազմար ազգը դալ այս դիւանին վրայ վիճարանուելու . խնդիր մը՝ որ մեր ազգային արտօնագրեալ իշխանութեան բոլոր

պարտաւորութիւնքը իր մէջ կը պարունակէ , խնդիր մը՝ որու գործնական կարևորութիւն չորուելէն ազգն իր ազգային բարոյական հանգամանքները ոչ միայն չմտախօսուի , այլ զըժբազդարար՝ ունեցած բարի և նուիրական հանգամանքներն ալ կորսնցուց և այս պատճառաւ այն ամեն գրագէտ որ գրիչ ձեռք կառնու՞ չկրնար առանց վշտալիր զգացումներ տողելու գրիչը ձեռքէն ձգել , սակայն և այնպէս , եթէ յուսով մը գրիչը ձեռքէ ձգէր՝ կենդանութեան նշան մը կրնար համարուիլ . ընդհակառակն յուսահատ կը քաշուի ասպարեզէն :

Բայց այս անգամ երբ այս խնդիրը հոս կը ներկայանայ պաշտօնապէս վիճարանուելու և որոշման մը հասնելով վճիռ արձակելու վարչութեան որ՝ կամ գործադրէ այդ վճիռն և կամ սմբաստանուելով իրաւամբ քաշուի / ազգային գործադիր իշխանութեան աթոռէն , ահա այս անգամ յոյս մը կայ կէտ նպատակին հասնելու եթէ ամենամեծ հեռատեսութեամբ տրուի այդ վճիռն , որպէս զի ատոր գործադրութեամբը չըլլայ որ յետինն չար քան զառաջինն ըլլայ :

Ինչ է ուրեմն մեզ պէտք եղած դատարակութեան հիմունքը , որու վրայ հիմնուելիք չէնք խախտու չըլլայ :

Մեր դատարակութեան հիմունքը եռանկիւնի սիւնի մը վրայ դրուած է՝ այնպէս կապակցեալ իրարու՝ որ անկարելի է մին միւսէն զատել առանց չէնքը մնասելու :

- 1. Կրօնական
- 2. Ազգային
- 3. Քաղաքական :

Մայրայեղ ազատական տեսութեանց հետևողներն թերևս ըսեն թէ կրօնական դատարակութիւնը ազգի մը ասպնով ասպազային հիմանց մէկը և մանաւանդ առաջինը չհամարուիր :

Ես հոս այս նախադասութիւնը թերևս ըսեն ըսելով յիշեցի , սակայն խնդիրն իր մեր այժմու գործնական վիճակին մէջ թերևս թէութեանը տակ չէ , այլ մինչև

մէկ աստիճան հաստատական վիճակի մէջ է :

Արևմտեան ծայրայեղ մոլեռանդութիւնը՝ արևմտեան ծայրայեղ անկրօնութիւն մը յառաջ բերած էր և այս բնական էր . զի երբ ազգաց ասպնով երջանկութեան ազատական միջոցներն ծայրայեղ մոլեռանդից կողմէն յանուն կրօնի կը մերժուէր ու կը բանադրուէր , միթէ բնական չէ՞ր՝ որ ծայրայեղ ազատականներն ալ խնդրոյն անդի կողմն անցնելով՝ կրօնքը բոլորովին մերժէին :

Ամեն խնդիր այս աշխարհիս մէջ իրարու կապակցեալ բոլորակ մ'է , որ միշտ երկու ծայրերն իրարու դէմ դէմի կը բերէ . այսպէս պէտք էր ծայրայեղ մոլեռանդութիւնը ծայրայեղ ազատութեան՝ այսինքն անկրօնութեան հետ ուղղակի դէմ դէմի դար . եթէ այսպէս եղած չըլլար՝ ինչե՞րնուն պէտք էր այդ ազատականաց Աստուծոյ գոյութիւնը , Քրիստոսի աստուածութիւնը , կրօնական արարողութիւնները , վերջապէս հաւատքին հիմունքը խնդիր ընել և պարզ հաւատացեալները մոլորեցնել :

Մեր մէջ բարեբազդարար չկար այդ ծայրայեղ մոլեռանդութիւնը , բայց դժբազդարար մուտ գտաւ անկրօնութիւնը . չկայ մէկը մեր մէջ՝ որ բացէ ՚ի բաց անկրօն եմ ըսէ , բայց կան շատեր , մանաւանդ բարոյապէս տիրող դասուն մէջ՝ որ մոլորեալ են :

Մեր ազգին բարոյապէս տիրող դասը ասկէ մինչև 50 տարի առաջ այս վիճակին մէջ չէր , այլ ընդհակառակն ամենապարզ և խզճի տէր հաւատացեալներ էին :

Պէզճեան Յարութիւն ամիրայ պարգապէս տիրացու էր . սա իր ամենարարձըր դիրքին մէջ՝ կիրակի օրեր եկեղեցի կերթար կերգէր : Հիմա մէկը չունինք որ Պէզճեանի քաղաքական բարձր դիրքն ունենայ . սակայն բազդատարար անկէ տասր աստիճան վար այժմու երևելիներէն մէկը , ոչ միայն եկեղեցւոյ մէջ երգող տեսնել , այլ պարզ աղօթք մ'ընելու հա-

մար եկեղեցւոյ մէջ ասոնցմէ մէկը տեսնել անհնար է :

Ասոր պատճառն ուրիշ բան չէր , բայց միայն Եւրոպիոյ անկրօն հեղինակութեանց ընթերցումն մեր վրայ բարոյապէս տիրող դասուն մէջ տարածուելով , ասոնց ջերմեռանդութիւնը կամ հաւաքը խախտած ըլլալն , մինչդեռ միևնոյն գրոց ընթերցումը Անդղիոյ , Քերմանիոյ և Ամբիկայի մէջ մենէ խիստ աւելի տարածուած ըլլալով հանդերձ՝ ասոնց բազդատարար մեր վրայ բրած ազդեցութիւնը հոն բրած չէ . պատճառն ի՞նչ է ասոր . պատճառն այն է որ նոյն ազգաց ճշմարիտ եկեղեցականներն կանուխ տեսան այդ դաղափարաց տարածումն իրենց ազգաց մէջ , ուստի և ատոնց տարածումը չարդիւեցին իրենց ընթերցողաց՝ մեզ պէս Բընանի մէկ գործին տալագրութիւնը դաղրեցունելով , այլ իրենք ալ գրիչ ձեռք առին և յանուն հաստատեալ դիտութեանց այդ հեղինակութիւնները քննեցին ու մերժեցին . իրենց ժողովրդոց հետ վերացական կերպով շխօսեցան , այլ յանուն բնական և այլ հիմնական գիտութեանց խօսեցան և իրենց ժողովրդոց խախտեալ կրօնական համոզումը վերահաստատեցին . կա՞յ արդեօք այսպիսի գործ մը մեր մէջ տալագրեալ . ամենին և ոչ մէկ հատ իսկ , սակայն ազգին մէջ օտար լեզուաց հմուտներն ատոնց հակառակ գրութիւններ , այսինքն անկրօն հեղինակութիւններ խիստ շատ կարգացած կան :

Ահա ասկէ առաջ եկաւ մեր կրօնական դատարակութեան բոլորովին խանդարուիլն և կրնանք ըսել բոլորովին ջրնջուիլն :

Մի գորմանաք երբ երբեմն մենէ բարձրաստիճան մարդիկ եկեղեցականաց ազդեցութիւնը կտորելու կողմը կը գրանուին և ատոր վրայ կը պնդեն . ատոնք իրենց համոզմամբ իրաւունք ունին այդպէս պնդելու . փասն զի ատոնք մեր կըղերը արևմտեան կղերին վրայ կը չափեն , և ըստ այնմ կուզեն հեռու հեռու փախ չիլ ատոնցմէ . մեր կղերն միշտ ցուցած

է իր հեղուքիւնն ու ճշմարիտ հայրութիւնն ասոնց, այլ դանդաղ կեցեր շարունակ կը գանգատի թէ ինչո՞ւ մեզ չեն պատուեր ու կը հալածեն, մինչդեռ փոխանակ գանգատելու, այդ մտորեալ ոչ խորները իրենց մտորութենէն ազատելու ճարը մտածելու էր ամեն բարոյական միջոց ձեռք առնելով:

Այս սակայն միթէ մեր եկեղեցականութիւնը իր այժմու վիճակին մէջ կրնա՞ր սակէ աւելի բան մ'ընել. — մեք կրսենք ոչ. զի նախ և առաջ ինքն ալ կրօնքը բընարկան ճշմարտութեանց վրայ հաստատեալ ուսմամբ սովորած չէր, այլ իբրև ստուածային յայանութիւն միայն սովորած էր. մեր կղերն ինքը կը հաւատայ կրօնքին, բայց իր հաւատացածը անկրօնի մը հաւատացնելու համար պէտք եղած բընական փաստերը չգիտեր, այլ աստուածարանական փաստերը գիտէ. ուստի մէկ տեսութեամբ լաւ բրաւ, որ իր չգիտցածը սովորեցնելու չելաւ, այլ պարզապէս հաւատացնելով բաւականացաւ, և եթէ իր այս վիճակին մէջ սակէ աւելին ընելու ելլէր՝ վիճակնիս աւելի գէշ պիտի ըլլար:

Արդ հիմայ անտարակուսելի ճշմարտութիւն մ'է թէ՛ մեր մէջ այն կրօնական դաստիարակութիւնն այսօր՝ որ ի նախնեաց անտի կար, չկայ. բայց ինչ մնաս եղաւ սակէ ազգին:

Ես հոս աստուածարանութեան չեմ ելած՝ որ ասոր յախտնականութեան մնասը բացատրեմ. ես ազգին աշխարհային մանաւանդ բարոյական մնասը պիտի ըսեմ:

Եկեղեցին ճշմարիտ և իրական հասարակութեան կեդրոն մ'է. այս հաւասարութիւնը կորսնցուցինք. եկեղեցին ներողամտութեան իրական կեդրոն մ'է, այդ ներողամտութեան բարոյականը կորսնցուցինք. եկեղեցին համախմբեալ ընկերականութեան կեդրոն մ'է, այդ ընկերականութիւնը կորսնցուցինք. եկեղեցին մանաւանդ մեր եկեղեցին՝ ազգային միութեան կեդրոն մ'է, այդ միութիւնը

կորսնցուցինք. եկեղեցին ընդ ամենայն ծագս երկրի ազգային դադարաբաց անքակտելիութեան կեդրոնն է, այդ անքակտելիութիւնը կորսնցուցինք. եկեղեցին հարուստին ու աղքատին նուիրատուութեան կեդրոնն է, այդ նուիրատուութիւնը կորսնցուցինք. եկեղեցին ընտանեկան բարոյականութեան կեդրոնն է, այդ բարոյականութիւնը կորսնցուցինք. դեռ էն մեծն ըսե՞մք արդեօք. եկեղեցին քաջութեան, մարտիրոսութեան, նահատակութեան և անվեհերութեան դատարանն է, քաջութիւննիս կորսնցուցինք, մարտիրոսութենէն ու նահատակութենէն լքանք, անվեհերութիւննիս թուա ու անհետացաւ. եկեղեցին այս աշխարհիս մեծութիւնն ու կեանքը ոչինչ ըլլալը քարոզող մարմին մ'է. այսօր աշխարհիս մեծութենէն և այս աշխարհիս կեանքէն չը բաժնուելու համար՝ կոյսերնիս կը լլկեն, կը համբերենք. եկեղեցինիս կը պղծեն, կը լուենք, Ս. հաղորդութիւննիս շանք վիզը կը կախեն, եկեղեցւոյ Ս. բեմին վըրայ շունք կը հանեն, և իբրև մարդ մարդու մը համար բնաւին անտանելի եղած բաներուն կը դիմանանք անտարբերութեամբ. թէ աշխարհական և թէ եկեղեցական ո՞ւր է մէկը, որ այսպէս ազրեկէն լաւ է մեռնիլն ըսելով՝ սրբապիղծ մը սպաննած ըլլար և ինքն ալ կախաղան ելլէր, որպէս զի եկեղեցին դայն սրբոց կարգը դասէր. — չկայ ասոնց և ոչ մէկը, զի եկեղեցւոյ սովորեցուցած նահատակութեան և մարտիրոսութեան դադարաբար բոլորովին մերկացած ենք, մինչդեռ եթէ մեր նախնիք մեզ պէս ըլլային՝ ոչ եկեղեցւոյ տօնած սուրբերուն անունը պիտի լսէինք այսօր, և ոչ մեր եկեղեցին մանաւանդ անոր հաւատացող միակ Հայոց ազգը պիտի գտնուէր աշխարհիս երեսը, ինչպէս որ չպիտի մնայ եթէ այսպէս շարունակենք և անցաւոր կեանք մը զոհելը շտորովինք:

Տեսէք Անդղիական մեծ ազգը, որ կեանքին որչափ թանկագին ըլլալն մենէ միկոն անգամ աւելի գիտնալով հանդերձ

պատուոյ համար վայրկեան մը չվարանիր զայն զոհել, զի եկեղեցասէր է և անոր համար մեծ է ինչպէս նաև այն ամեն ազգերն որք եկեղեցասէր են:

Երկրորդն է ԱԶԳԱՅԻՆ:

Ուղիղ քննադատի մը պաշտօնը միայն չարատեսութիւն չէ, այլ ստաւել քան զամենայ ուղղատեսութիւն:

Ազգային դաստիարակութեան վիճակնիս այնքան յուսահատական չէ, որքան է կրօնականը:

Ուր որ եկեղեցի մը՝ հոն դպրոց մ'ունինք. առաջները աղջկանց վարժարաններ չունէինք. հիմա գրեթէ ամեն տեղ ունինք. առաջները անհաստական դպրոցները շատ խեղճ բաներ էին. հիմա կանոնաւոր անհաստական դպրոցներ բացուած կը տեսնենք. առաջները լրագրութիւն բնաւ չունէինք, 10-20 տարի առաջ ունեցածնիս ալ խեղճ բաներ էին. հիմա եթէ ոչ կանոնաւոր և կատարեալ, գոնէ ազգին մեծ անպատուութիւն չըբերող լրագրութիւն մը ունինք. առաջները հայերէն տառերով բայց հայերէն լեզուաօրական թերթ մը հանել անկարելի էր. հիմա ժամանակներ եղաւ որ հայերէն լեզուա Ծ-Յ օրինակ թերթ ունեցանք, և այսօր ունինք քանի մը հատ. ասոնք Եւրոպական քաղաքակրթութենէն փոխ առած լաւ դադարաբաններուս արդիւնքն են. թէ և չունինք տակաւին մեծ գործերու հրատարակութիւններ և ճոխ թանդարաններ և ակադեմիա, բայց ասոնց դոյութիւնը անկարելիութեան կարգը չէ, չունենալնուս պատճառը մասամբ աղքատութիւննիս է և մասամբ դանդաղութիւննիս:

Սակայն ուշադրութիւն պէտք է թէ ասոնք որ ունինք՝ ազգին ո՞ր դասուն գործն են. — բոլորն ալ աղքատի զաւակներ, բոլորն ալ սղտիկ և աննշան դըսրոցներու աշակերտներ, բոլորն ալ օրական հացը հագիւ ճարելու կարող մարդիկ, բոլորն ալ ստանց բարձրագոյն քաջալերութեան մը՝ սոսկ իրենց զգացումէն զրդեալ իրենց ճակտին քրտինքը զոհելով

յառաջ եկած մարմիններ. թէ հողաբարձու, թէ դասատու, թէ հրատարակիչ, թէ հեղինակ և թէ լրագրագետ՝ բնաբացառութիւն մը չկայ մէջերնին, և սակայն ազգը սակէ աւելին կապասէ ասոնցմէ, որք ունին զգացում աւելին ընելու, չունին կարողութիւն զգացումնին լիովին գործադրելու:

Ազգ մը կամ մարդ մը իր ինչ վիճակի մէջ ըլլալը հասկնալու համար օտարին վըկայութիւնը գիտելու է:

Եւրոպա ցարդ իբրև ազգային հանգամանք ինչ գտաւ մինչ Հայոցս վրայ անոնց գտած մեր վաճառականութիւնը երկրագործութիւնը և ձեռարուեստը մեր ազգին քաղաքական մասը կը կազմէ, ուստի և քաղաքական տեսութեան կը վերաբերի. Եւրոպա իբրև ազգային գովելու արժանի հանգամանք մը ունեցող երկու դաս գտաւ մեր ազգին մէջ իրենց գործէն գատելով:

Աղքատ բեռնակիրներն և աղքատ գրիչ բռնողներն:

Հայոց ազգը Եւրոպայի ճանչցնելու զող բարի Եւրոպացիներն՝ կրսեն ու կը կրկնեն իբրև պարծանք Հայոց ազգին մեր այն բեռնակիր պանդուխտ եղբարքը՝ որք հաւատարմութեամբ, պարզութեամբ և արիութեամբ իրենց հայկական նախատիպը չկորսնցնելով այսօր Հայոց ազգին պարծանքն են օտարին առջև, սակայն բնաւ բարձրագոյն յարգանք մը կամ բարձրագոյն խնամք մը տեսած չեն ազգին բարձրագոյն դասէն, այլ իրենց ցաւոց ու թշուառութեանց տակ կը հեծեն պանդխտութեան մէջ՝ ընտանիքնին, ըստացուածքնին և հայրենիքնին երեսի վրայ թողած:

Արսեն ու կը կրկնեն բարի Եւրոպացիք իբրև պարծանք Հայոց ազգին այն աղքատիկ դպրոցներէն ելած այն աղքատիկ երիտասարդութիւնը, որք ստանց որ և է բարձրագոյն քաջալերութեան, առանց բարձրագոյն և հիմնական կրթութեան ազգին գրականութիւնը կը մշակեն և նախնեաց ոսկեղարը վերակենդանացնել

կուզեն՝ նման այն միջիւնին՝ որ առանց իր տկարութեանը նայելու՝ ահագին լեռները փորել կուզէ :

Արնաք ցուցնել իբրև ազգային բարոյական հանգամանքի տէր ցուցուած՝ այս երկուքէն զատ բարձրագոյն դաս մը՝ որ իւր գործերովը օտարին կողմէն վկայութիւն մը ընդունած ըլլար իբրև պարծանք Հայ ազգութեան . այո՛, բարձրաստիճան տիրութեանը ունինք, բարձրաստիճան հարուստներ ունինք . բայց բնտրուած բանը ասոնց անձնապէս ունեցած վիճակը չէ, այլ ասոնց ազգային գործն ու հանգամանքն է, որու համար իբրև պատիւ ազգիս՝ օտարի մը վկայութիւնը լսած չենք . և արդարև մեք ալ ներքնապէս ասոնց որ և է ազգային բարձր գործը տեսած չենք :

Յայտնենք արդեօք ճշմարտութիւնը իր մերկ վիճակին մէջ, այո՛, յայտնենք որպէս զի եթէ այսօր ատոր պտուղը չվայելցինք, վաղը վայելենք :

Ճեմարանը՝ որու աշակերտն ըլլալու պատիւը ունի Վսեմ. Ատենապետ փաշան, էսնաֆ դասը բացաւ, բարձրագոյն դասը գոցեց . անկէ ետքը Հիւանդանոցի դպրոցը՝ որու աշակերտն ըլլալու պատիւն ունին այսօր մեր Ազգային ժողովոյն մէջ բարոյապէս բարձր դիրք ունեցող Փափաղեան, Ալաճաճեան և այլ էֆէնտիներն՝ էսնաֆ դասը բացաւ, բարձրագոյն դասը գոցեց . անկէ ետքը Սամաթիոյ դպրոցը՝ որու աշակերտն ըլլալու պատիւն ունին և ունին հոս տեղ շատ մը երեսփոխաններ՝ էսնաֆ դասը բացաւ . Ղազարոսեան Քրիստոսաւոր և Մինէճի Անդրանիկ էֆէնտիներն ճեմարանի և Հիւանդանոցի փորձէն ետքը գլուխ կեցան այս դպրոցին և չթողուցին որ բարձրագոյն դասը ձեռք երկնցնէ ատոր վրայ, որով այսօր ազգային դասատուաց էն ընտրելու լուրջներն նոյն վարժարանի դասատուներն են . անկէ ետքը Խասաղի վարժարանը էսնաֆներն յառաջացուցին և այսօր բաւական նշանաւոր արդիւնք ունի Հայ գրական ասպարէզին վրայ . Շահ. Նու-

պար վարժարանը՝ որ հոգեւոյս ազբատիկ Շահնազար վարդապետին կտակովը և պարզ արհեստաւորի զաւակ Ներսէս Եպիսկոպոսի ձեռամբ հաստատուած և պարզ արհեստաւորի զաւակ Միքայէլեան Արմօն էֆէնտի ձեռամբ յառաջացած և ազգին բաւական արդիւնք տուած էր, բարձրագոյն դասին ձեռքն անցաւ յետոյ և գոցուեցաւ :

Հիմա ալ երբ մեր ամենուս աչաց առջեւ Ղալաթիոյ մէջ կեդրոնական վարժարան մը հիմնուեցաւ փառաւոր՝ այդ ալ դեռ չբացուած և միջին կարգին ձեռքը չանցած՝ կորոշուի գոցել զայն պատրիարքարան ընելու որոշմամբ . այն կեղծ պատրուակին տակ թէ դեռ անոր յատկացած եկամուտները պարտական են, արդիւնք չունին, ուստի առայժմ Պատրիարքարան ըլլայ և պարտքը վճարուելէն ետքը բացուի . միւս կողմէն կեդրոնական սնտուկին յաւելեալ եկամուտը շոսայթաբար պաշտօնէից կը բաշխեն :

Ասոնք այնպիսի դասն զուգադէպ իրողութիւններ են՝ յորմէ հետեւած է սա ճշմարտութիւնը թէ՛ Հայոց ազգին միջին դասը կը շինէ, իսկ բարձրագոյն դասը կը կործանէ :

Մանր է այս հետեւութիւնը և ես կը խոստովանիմ թէ ծանր է . սակայն միթէ ծանր չէ՞ սա ճշմարտութիւնը՝ թէ Եգիպտական կառավարութիւն մը իր իմաստութեամբը վերահանգնող Նուպար փաշա մը՝ իր անուան նուիրեալ վարժարանի մը գոցուելուն դէմ անտարբեր մնաց :

Սակայն ինչ է արդեօք ասոր բարոյական պատճառը . միթէ մեր ազգին բարձրագոյն դասը ազգատեաց է և իր ազգին յառաջ երթալուն դէմ է . քալիցի ատանկ ակնարկութիւն մ'ընել ինձ և ձեզ, այլ ճշմարտութիւնը սա է թէ՛ այս բարձրագոյն դասը իւր դաստիարակութիւնը օտար վարժարանաց մէջ առած է, ուստի անտարբեր է իր ազգին վրայ չզղալով այնպէս ինչպէս որ կը զղայ միջին դասը :

Չայս հաստատուելու հաստատ ասպարոյց

մը չէ՞ միթէ օտար սովորութեանց բոլորին ալ այս բարձրագոյն դասուն միջոցաւ մեր ազգին մէջ մուտ գտնելը . ասոնք մեր ազգիկները հայկական պարզութենէն հանեցին, ասոնք իր մայրենի լեզուն խօսելէ նախապատիւ համարեցին Քաղղիերէն խօսելը . ասոնք մեր Հայ եկեղեցականութեան պարզ և անշուք վիճակը իրենց անպատուութիւն համարելով զլացան Հայ եկեղեցականութեան այն յարգանքը՝ որ մեր ամիրաները կուտային, այլ այդ յարգանքը և աւելին տուին փառաւոր հագուող օտար եկեղեցականութեան, ասոնք իրենց ազգային անունն ալ թարգմանեցին Եւրոպականի, տեսնուեցաւ նաև մարդիկ՝ որք Հայ ծնած ըլլալն իրենց անպատուութիւն համարեցին :

Այս ամենուն պատճառն այն է որ ազգին բարձրագոյն դասը ազգային կրթութիւն չառաւ . ինչ պիտի ըլլար ազգին վիճակը՝ եթէ ասոնց խառն՝ այսինքն օտար ազգաց հետ սոսուանալու տուած ազգաւեր օրինակն ալ մօտայի կարգ անցնէր հասարակ դասուն մէջ՝ ինչպէս որ շատ մը ազգաւեր սովորութիւններն մտաւ ի կործանումն ընտանեկան ազգային պարկեշտութեան :

Սակայն երբոր ազգի մը բարձրագոյն դասը այսպէս օտարացեալ է իր ազգէն՝ կրնա՞յ այն ազգը մեծ գործեր տեսնել . — աշխարհիս փորձը կը ցուցնէ թէ ոչ, զի միջուն դասուն ընելիքը ստեղծով հոր փորել մ'է, մինչդեռ ասոնք կրնան շատ մեծ բարիք գործել ազգին՝ եթէ ազգային կրթութիւն առած ըլլային . ասկէ յառաջ եկաւ մեր քաղաքական այն մեծ փետր, որ թէ և միշտ կը կրէինք, բայց վերջին դէպքերը բացորոշ ցուցին, ուստի համաօտիւ մը ազգին քաղաքական դաստիարակութեանը վրայ ալ խօսինք ու եղբակացութեան իջնենք, ներողութիւններ խնդրելով այս մեծ խնդրոյն վրայ քիչ մը երկար խօսելուս՝ որու վրայ կրնայ հատորներ լեցուիլ :

Ես հոս քաղաքական դաստիարակու-

թիւն ըսելով՝ քաղաքագիտական դպրոց մը բանանք ըսել չեմ ուզեր, զի այդ վեր է մեր կարողութենէն, այլ կուզեմ ըսել թէ հաստատենք ազգային քաղաքականութիւն մը և զայն յառաջ վարել ու անկէ չլեղիլ գիտնանք :

Ազգի մը քաղաքականութիւնը ազգային կոչուելու համար իր համազգային քաղաքական գրից վրայ հիմնեալ ըլլալու է . մեք այսօր մէկ քանի տէրութեանց տակ կը գտնուինք . կրնան ասոնք բարեկամ ըլլալ իրարու, երբեմն ալ թշնամի . ուստի մեզ համար իբրև սկզբունք վտանգաւոր է այն քաղաքականութիւնը, որով միոյն կամ միւսին թմբուկը զարնել կառաջնորդուինք երբեմն և միշտ կը վրնասուինք, զի դէպքերը փոխուելուն պէս՝ մեք ալ ընթացքնիս պիտի փոխենք անշուշտ, սակայն այն ազգը որ տեական քաղաքականութիւն մը չունի և միշտ կը փոխէ իր դերը, պատիւ չկրնար գտնել և ոչ մէկէն, ինչպէս որ մեք քաղաքականութեան մասին և ոչ մէկէ մը պատիւ գտած չունինք, զի որոշ և հիմնական քաղաքականութիւն մը չունինք՝ որու համեմատ պատիւ ալ գտնենք :

Սակայն ինչո՞ւ է որ չունինք այդ քաղաքականութիւնը . — պատճառն այն է որ ազգերնուս ընդհանրական քաղաքական վիճակին վրայ տեղեկութիւն չունինք :

Այ մեք գիտենք Առաստտանի և Պարսկաստանի Հայոց քաղաքական վիճակն ու շահը և ոչ անոնք փոխադարձաբար մերը գիտեն :

Այս բեմը չներեր այս կէտին վրայ աւելի խօսելու :

Ուստի կեդրականները թէ ուղղակի ազգին կեդրոնական իշխանութեանը տակ կեդրոնական վարժարան մը պէտք է՝ ուր տրուի՝

1. Կրօնական դաստիարակութիւն .
2. Ազգային դաստիարակութիւն .
3. Քաղաքական համազգային դաստիարակութիւն :

Այս վարժարանն է ահա Ղալաթիոյ նորակառոյց վարժարանը՝ որ պէտք է .

ըլլայ ուղղակի Ռուսմական խորհրդոյ հոգաբարձութեանը կամ տեսչութեանը տակ, և ուրիշ ելած աշակերտք թէ է կեղեցական և թէ աշխարհական տարածելու են բոլոր ազգային վարժարանաց և պաշտօնարանաց մէջ. հոն ընդունուելու են բոլոր այն մանկուքն ու մարդիկը որք Հայ անունը կը կրեն թէ և ըլլան Բողոքական կամ Քաթոլիկ:

Այդ վարժարանին մէջ մեզ պէտք չէ սովորեցնել թէ գաղղիերէնը, թուարանութիւնը և այլն ի՞նչպէս սովորեցնելու է, այլ պէտք է սովորեցնել թէ՛

1. Ազգային կրօնքը ի՞նչպէս սովորեցնելու է՝ որ անկրօնութիւնը չկարենայ յաղթող հանդիսանալ:

2. Թէ ազգային կեանքը ի՞նչպէս տրւուաւ որեւիտ է տղայոց սրտին մէջ, որ զայն ամեն ուրիշ կեանքերէ նուիրական և նախապատիւ համարեն և օտարամտութեան չմատնուին:

3. Թէ ազգային քաղաքական կեանքը պատմական տեսութեամբ ի՞նչ էր իր ծագմանը միջոցին, ի՞նչ քաղաքականութիւն բունեց որ զարգացաւ, և ի՞նչ որով իւր անկախութիւնը կորսնցուց, ի՞նչ այսօր որով կապրի աշխարհիս ամեն կողմը, և վերջապէս ի՞նչ քաղաքական կեանք բռնելու է՝ որ զանազան տիրող շահերու տակ ազգին որ և է մասը չմնասուի միւս մասին բռնած քաղաքականութենէն:

Երբ անգամ մը մէկ քանի շրջան այս զասերն աւարտող դասատուք և պաշտօնեայք անկէ դուրս գալով ազգին ամեն կողմը տարածուին՝ մտտահեղիք՝ որ այն վայրկենէն սկսած է վերակենդանութիւն մը Հայոց ազգին համար, որու աւանդապահն եղան մեր նախնիք մինչև ցայսօր և Հայոց ազգը այս ազատութեան դարուս և այս սահմանադրական աւուրս հասուցին:

Անպատուութիւն է մեզ և աններելի վատութիւն, որ նախնեաց ամենայն տառապանք ու շարշարանօք ցայսօր հասուցած այս Հայ ազգը՝ մեր այս ազատութեան դարուս և սահմանադրական դը-

րութեանս մէջ մեռցնենք և թողնենուս չհասցնենք:

Թող ժողովդ ընդունի այս սկզբունքը՝ այն ատեն պատրաստ եմ նաև անոր և կամուտի աղբիւրները ցուցնելու և աւելի մանրամասնութեան մտնելու:

ՉԱՅՆԵՐ. — Շնորհակալ ենք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես կը կրկնեմ Օգսէն էֆէնտի իբր եզրակացութիւն բերած առաջարկութիւնը կեղրոնական ուսումնարանին համար. վասն զի այդ ուսումնարանին կառուցման ՚ի մօտուստ և ՚ի պաշտօնէ տքնած ու աշխատած եմ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Օգսէն էֆէնտի առաջարկութիւնն ևս ալ կը կրկնեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Պէտք է զիտնալ որ խնդիրը Ղալաթիոյ նորակառոյց վարժարանին վրայ չէ, այլ Դաստիարակութեան դիւանի տեղեկագրին վրայ կը խօսինք, և դեռ առաջին ընթերցմանը մէջ ենք, ուր սկզբնական կէտերուն վերայ ընդհանուր տեսութեամբ խօսիլ օրէն է: Արդ Օգսէն էֆէնտի իր խօսքը լմընցուց. եթէ ուրիշ խօսք ուզող չկայ, այսօր կրնանք փակել առաջին ընթերցումնիս քուէարկութեամբ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կարծեմ թէ ըստ կանոնադրութեան մեր առաջին պատուարութիւնն էր Դաստիարակութեան դիւանի տեղեկագրին ամբողջութիւնը քուէարկել, որով տեղեկագրին եզրակացութեան Յ կէտերն ընդունուած ըլլալը կամ չըլլալը պիտի որոշուի. այս Յ կէտերէն առաջինն է Դաստիարակութեան խնդրոյն ստիպողականութիւն տալ, որ ընդունուած է արդէն՝ ժողովս իւր մէջ առած ըլլալով. երկրորդ կէտն է վարժարանաց բարեկարգութեան ծրագիրն օրակարգն անցունել. երբ այս ալ ընդունինք՝ բնականաբար ծրագրին մէջ մէկ օրինակը պիտի զրկուի երեսօտիսանաց սերտելու զայն, որպէս զի կարող լինինք յաջորդ նստին անոր յօդուածոց քննութեանը մտնալ: Երրորդն է վարժապե-

տանոցի հաստատութեան կէտը. այս ալ թէ որ ընդունինք՝ բնականաբար վարչութեան պիտի յանձնարարենք որ անոր աւանդելի ուսմանց հիմնագիծը պատրաստէ և ներկայացնէ ժողովիս: Կը մնայ դաստիարակութեան պիտոյից համար Պիտտէին մէջ դոււար մը սահմանելու կէտն. այս մասին ալ բնականաբար Պիտտէի գալուն պիտի սպասենք: Ըսել է թէ երկու կէտ կայ դիւստորապէս որոշելի երբ Դաստիարակութեան դիւանի տեղեկագիրն ամբողջութեամբ այսօր քուէի դրուի. մէկն է վարժարանաց բարեկարգութեան ծրագրին օրակարգն անցնիլը և միւսն է կեղրոնական վարժարանի մը գոյութեան պէտքը: Այս պէտքը միանգամ որոշուելէ ետև՝ վարժարանին նիւթական և բարոյական յանձանձանաց տնօրէնութիւնը կրնանք անմիջապէս վարչութեան յանձնել: Իրիստ պարզ է այս բաժնս, և այնչափ պարզ՝ որ թիւր մեկնութեանց տեղի չկրնար տալ. ուստի այս տեսութեամբ տեղեկագրին ամբողջութիւնը քուէարկել կառաջարկեմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փափազեան էֆէնտի կըսէ թէ տեղեկագրին ամբողջութիւնը քուէարկելով եզրակացութիւնն ալ ընդունած կըլլանք. այս ստոյգ է. բայց ըստ որում ՚ի սկզբանէ Տեղեկագիրը՝ Դաստիարակութեան խնդրոյն իբր օրինական ծրագիր նկատեցինք. ուստի եթէ այսօր քուէարկութիւն ընենք, մի միայն անոր ամբողջութեան և պարունակած սկզբունց ընդհանրութեան վրայ խօսքերնիս վերջացնելու քուէ պիտի տանք, և Ա. ընթերցումը փակելով Բ. ին անցնիլ պիտի որոշենք. երկրորդ ընթերցման ժամանակին կը մնայ մանրամասնութեանց վրայ վիճարանել, որոց մէջն են Փափազեան էֆէնտի յառաջ բերած կէտերը. օրինակի համար ի՞նչ է կեղրոնական վարժարանը սուսածն և թէ դործադրելի՞ է մեր ազգին մէջ կամ ոչ, և ի՞նչ կերպով, ասոնք վիճարանութիւնը պիտի որոշէ. հապճեպով չըլլար:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Կարծեմ թէ

անապարանք ըսածնիդ տեղի ունեցած չըլլար թէ որ այսօրուրնէ Դաստիարակութեան դիւանի տեղեկագրին ընդհանուր սկզբունքը քուէարկութեամբ ընդունուի. վասն զի այդ տեղեկագիրը քանի մը շարաթէ ՚ի վեր հաղորդուած է երեսօտիսանաց, և ամենքը զայն սերտելու ժամանակ ունեցած և արդէն սերտած են. ուստի արգելք մը մնացած չէ քուէարկութեան զնելու զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ղալաթիոյ վարժարանը կեղրոնական ընդհանուր վարժարանի վերածելու փափաքողներէն մէկն ալ ես եմ. 1865ին երբ Քաղաքական ժողովոյ ատենապետելու պատիւն ունէի, այդ գաղափարն ես յղացայ, բայց նոյն ատեն չյաջողեցաւ. այսօր դարձեալ անոր յաջողութեանը կը փափաքիմ. բայց գիտցած ըլլաք՝ որ քուէ մը տալով՝ սկզբունքն ընդունեցինք ըսելով՝ անոր գործադրութիւնը չկատարիր, այս տեսակ հաստատութիւնները միայնակ քուէ տալով լմննալիք բաներ չեն. ես դարձեալ կը կրկնեմ, ինչ որ առաջ քանիցս ըսած եմ, այսպիսի պարագայից մէջ նախ քան զամենայն ինչ վարչութեան կարծիքն առնուլ պէտք է, զի անոր կը պատկանի գործադրութիւնը. տեղեկագրին արդէն զրկած ենք վարչութեան 15 օրէն իւր կարծիքը խնդրելով. սակայն նա դեռ կարծիք չյայտնեց, ուրեմն սպասենք:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Թէ որ վարչութիւնը երկու ամսէն ալ պատասխան չբերէ, ի՞նչ ընելու ենք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Իրաւունք ունիք այդպէս ըսելու, սակայն մի՛ կարծէք որ այսօր քուէնիս տալով կրնայ լըմընցած համարուիլ ասանկ ծանր խնդիր մը:

(Աչո՛ւն) .
ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Եթէ քուէով չլմննար, անսահմանապէս երկարաձգելով ալ չլմննար:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Շատ բան կըրնաք ըսել ձեր նպատակին հասնելու հա-

մար, բայց դիւանը պարտաւորութիւն ունի այս տեղ եկած խնդիրները կանոնական ուղղութեան մէջ պահելու. օրինաց ծրագիր պիտի սահմանենք. կանոնը կը տրամադրէ որ 5 ընթերցումէ անցնի. այսօր առաջին ընթերցումը պիտի փակենք. այս է քուէի գրուելիքը, ուրիշ բան չեմ կրնար ընել:

Զայս ըսելով Ատենապետ փառանքալու գրաւ տեղեկագրին առաջին ընթերցման փակումն, որ միաձայնութեամբ ընդունուեցաւ ժողովին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հիմա այս քուէարկութեամբ տեղեկագրին ընդհանուր վիճարանութիւնը փակուած է. կը մնայ մանրամասն վիճարանութիւնն՝ որ տեղեկագրին երկրորդ ընթերցման պահուն վերապահուած է. այս ալ առաջիկային մէջ պիտի կատարենք: Բայց առաջիկայ նիստն ե՞րբ պիտի ըլլայ, այն ալ որոշեցէք, կազմէմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կառավարիւմ որ այս նիստը ներկայ բացման վերջինն ըլլայ և այսօր փակենք տարեկան շրջաննիս, յաջորդ բացման թողլով ուրիշ կարևոր գրառումներնիս. ուրախ ըլլանք որ Գաստիարակութեան դիւանի տեղեկագրին գոնէ առաջին ընթերցումն այսօր քուէարկելով՝ ընդունեցինք տեղեկագրին այն ամեն սկզբունքներն՝ որ Գաստիարակութեան խնդրոյն ամենակարևոր հիմունքն են:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք՝ որ ընդմիջեմ խօսքերնիդ, Փափագեան էֆէնտի. ժողովին ըրած քուէարկութիւնը սխալ կըմտնէք. այնպէս չէ. Գաստիարակութեան դիւանի տեղեկագրին առաջին ընթերցումը քուէարկուելով ուրիշ բան չեղաւ, բայց եթէ տեղեկագրին վրայ ընդհանուր վիճարանութիւնը փակուեցաւ. իսկ մանրամասնութեանց վրայ ասկէ ետքը պիտի վիճարանի ժողովը. ուրեմն ինչո՞ւ կըսէք թէ սկզբունքները միահաղոյն ընդունուեցան:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օրինաւորու-

թիւնն զմեզ սպաննելու չափ յառաջ չկըրնար երթալ. ևս սխալ պիտի ըմբռնեմ, իմ բանիս անանկ կուզայ, դուք չէք կըրնար փոխել իմ ըմբռնումս . . . :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ձեր սխալ ըմբռնելը հոգ չէ. բայց դիւանը չկրնար ներել որ ժողովը խարուի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ըսի թէ իմ գործիս անանկ կուզայ. ևս հաստատ պիտի մնամ իմ ըմբռնումս մէջ, վասն զի անով պիտի միտիթարուիմ և յուսադրիմ: Կանոնադրութիւնը սերտած եմ. առաջին անգամի քուէարկութեամբ սկզբունքներն ալ ընդունուած կը համարիմ. բայց տակաւին երկու անգամ ևս քուէարկութիւն ունինք, կրնայ ըլլալ որ երկրորդին կամ երրորդին մէջ այն սկզբունքներէն մէկը կամ միւսը կը մերժուի կամ կը բարեփոխուի. այս ուրիշ. իսկ երբ ասպաղայ քուէարկութիւնք՝ այն սկզբունքներն արմատախիղ ընելու չափ նկրտին, այն ատեն զանոնք կը վանենք: Աւասիկ այսօրուան քուէարկութեան տպաւորութիւնն ևս այսպէս կը հակընամ: Գալով այսօրուան նիստի փակման, ևս կը կրկնեմ իմ առաջարկութիւնս՝ որ այսօր տարեկան շրջաննուս վերջին նիստը համարուի և փակուի. բայց փակման ատենարանութիւնը շարտասանուած՝ կուզեմ որ ինձ խօսք տրուի ներկայ բացման մէջ դիւաններուն քով առկախ մնացած խնդրոց ցանկը կարդալու, որպէս զի ատենադրութեան մէջ անցնի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ձեր ըսածները, Փափագեան էֆէնտի, տարբեր բաներ են. պէտք է դիտնալ որ ևս իմ կանոնական պարտաւորութիւնս կը կատարեմ, հոգ չէ թէ որ զձեզ դժգոհ կը ձգեմ. իմ պարտաւորութիւնս էր տեղեկագրին առաջին ընթերցումը և վիճարանութիւնը փակել. այս պարտքս կատարեցի, ոչինչ կայ վճուեալ. միայն տեղեկագրին ընդհանրութեան վրայ վիճարանի բաւ համարուած է. վասն զի այս տեղեկագրին իրեն օրինական ծրագիր կարելի չէր իւր ամեն սկզբունքներով մէկէն այսօր վրձ-

ուց ներքե ձգել: Աւասիկ կանոնադրութեան տրամադրութիւնը. մտիկ ըրէք թէ ի՞նչպէս կը գծէ մեր բունելիք եղանակն օրինական ծրագրոց մասին. (Ե- Արեւ-դե-ր 4-2-ը 4-ը-ը 4-ը-ը 4-ը-ը):

«Յօդ. 66. — Ոչ մէկ ծրագիր օրինաց՝ «բաց ըստիսօղ դէպերէ՝ չդրվիր վերջնական քուէի, եթէ երեք որոշումէ «չանցնի՝ իրարմէ գոնէ մէկ շարաթ մի- «ջոցով: Առաջին որոշումը յատկապէս «ծրագրին ընդհանրութեանը վրայ կըլ- «լայ: Ժողովին կը հարցուի միթէ կուզէ՞ «երկրորդ որոշման անցնիլ: Երկրորդ որ- «ոշումը կըլլայ ամեն մէկ յօդուած քու- «էի դնելով, նաև անոնց վերաբերեալ «բարեփոխութիւններն՝ եթէ կան: Ժո- «ղովը կորույէ միթէ կուզէ՞ երրորդ որոշ- «ման անցնիլ: Երրորդ որոշումէն ետք՝ «որ ծրագրին բովանդակութեանը և մաս- «նաւոր տրամադրութեանց վրայ կըլլայ, «վերջնական քուէի կը ձեռնարկուի, որն «որ կը կնքէ զորոշումը . . . :»

(Ե- շ-ը-ը-ը-ը-ը)

Արդ՝ այսօր տեղեկագրին կամ որ նոյն է Գաստիարակութեան ծրագրին առաջին ընթերցումը փակեցինք, այսինքն՝ անոր ընդհանրութեան վրայ եղած խօսքերը լսելով գոհ եղանք. հիմա ծրագիրը ներս առինք, այս դիւանին վրայ, և յօդուած առ յօդուած անոր քննութեանը պիտի ձեռնարկենք. ըսել է թէ սկզբունքներուն վրայ մի առ մի պիտի վիճարանինք յետ այսօրիկ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կանոնական դիտողութիւն ունիմ. — Ե՞րբ է ծրագրին օրինական յօդուածներ ըսածդ՝ որ պիտի քննուին. 5 կէտ կայ. 4ը օրինական չեն, և մէկը միայն օրինական է որ երկրորդ և երրորդ ընթերցումէ պիտի անցնի. առաջին կէտն՝ որ ստիպողութեան կէտն է, արդէն ընդունուած է ըսի. երկրորդ կէտըն է վարժարանաց բարեկարգութեան ծրագիրն՝ որ օրէնք պիտի ըլլայ ազգին մէջ, և այս պէտք է երկրորդ և երրորդ ընթերցումներէ անցնիլ. իսկ մնացած

կէտերն ազգին մէջ վարժապետանոցի մը հաստատութեան կէտին կը վերաբերին. միթէ վարժապետանոցի հաստատութեան խնդիրն օրինական խնդիր մ'է:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես ալ ձեզի հետ, Փափագեան էֆէնտի, փափաքող եմ ազգին մէջ կեդրոնական ընդհանուր վարժարան մ'ունենալու. սոյն սկզբունքը փափաքելի է նաև ամենուս, բայց դժուարութեան համար վարչութեան հարցընելիք կէտեր ունինք. պէտք է ամենայն ինչ բացատրուի. պիտի տեսնէք վերջը վիճարանութեան մէջ թէ ի՞նչպէս օրինական կէտ մը կը ներկայացնէ նոյն իսկ վարժարանի հաստատութիւնն, որոյ համար շատ կարևորութիւն կուտաք մեր Քուէին. այսքան համբերեցիք, 2 ամիս ևս համբերեցէք, կաղաչեմ, տեղեկագրին ամեն մէկ մասունքը վիճարանութեան բովին անցնին, ապա՛ կուտանք վերջին վճիռը:

Փանք այսօրուան նիստի փակման խնդրոյն. ևս ալ Փափագեան էֆէնտի կը ձայնակցիմ տարեկան շրջաննիս փակել այսօրուրնէ, վասն զի Զատիկին շատ մօտ ենք և միջոց չունինք գրեթէ նիստ մ'ալ ընելու:

ՄԵԼԻԲԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ արդեւ մը չկայ 8 օրէն ետք նիստ մը ևս ընելու. ստիպողութիւն տալուս պատճառն այս է որ ներկայ շրջաննիս չգոցուած դաստիարակութեան խնդիրը քիչ մ'աւելի քայլ առած ըլլայ. 8 օրէն ևս պիտի ըլլամ առաջին խօսող դաստիարակութեան խնդրոյն վրայ, այժմէն արձանագրեցէք իմ անունս:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ալ ուզողներէն եմ որ յառաջիկայ ուրբաթ օր նիստ մը ևս ըլլայ. վասն զի բանաւոր պատճառ մը չեմ տեսներ չկրնալ ըլլալու:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Առաւել ընտրելի է այսօրուրնէ փակուիմ ընելն:

ՉԱՅՆԵՐ Քուէի գրէք:

Անմիջապէս քուէի գրուելով ժողովի փակման խնդիրը, 9 քուէի դէմ 15 քուէով փակումն ընդունուեցաւ:

Փափագեան Ս. էֆէնտին խօսք առնելով դիւանէն, յետագայ ցանկը կարգաց.

Նիստ Բ. Ընտրութիւն Համարաութեան յանձնախմբի:

Նիստ Բ. Առաջարկութիւն Փափագեան էֆէնտին. Համարակալութեան դիւանը պաշտօն ունենայ նախորդ վարչութեան պատրաստած Պիւտճէն քննել և նոր վարչութեան կարծիքն ալ ստեղծել, բերել ժողովիս ի վաւերացումն:

Ընդունուած ժողովէն:

Նիստ Բ. Առաջարկ. Փափագեան էֆէնտին. Ազգերձիւ պատասխանել նախագահական ատենարանութեան:

Յղեալ ի նախաքննութիւն:

Նիստ Գ. Երկու առաջարկ. Գափամաճեան էֆէնտին. Վասն հաստատութեան դատական օրինաց և վասն Սահմանադրական ինչ ինչ յօդուածոց սրբազրութեան:

Նիստ Գ. Առաջարկ. Ստեփան փաշայի. Վարդապետաց և եպիսկոպոսաց ուր տեղւանք և ի՛նչ պաշտօնով և ի՛նչ թուով դրուուելուն համար կանոնական ծրագիր մը խնդրել վարչութեանէն:

Ժողովէն ընդունուած:

- Նիստ Ե. Բողոք 5 երեսօտիսանաց
- » 14 եկեղ. »
- » 5 »
- » 8. Երեսիա հօր.

Յղեալ նախաձ. և Ձեռն. միացեալ դիւանաց:

Նիստ Զ. Հարցում երկու երեսօտիսանաց վասն կամաւոր գորաց.

Պատասխանը յետաձգեալ:

Նիստ Ը. Առաջարկ. Գափամաճեան էֆ. ի Վասն 4 րդ յօդուածոց Պատրիարքական դիւան Սահմանադրութեան:

Յղեալ նախաձ. դիւանին:

Նիստ Թ. Վասն երկու քաղաքացիութեան խնդրոյն վերահաստատեալ է յանձն

նաժողովն մեր, իւթիւճեան և Օգոստէն էֆէնտիններու:

Նիստ ԺԲ. Խնդիր Համարաութեան յանձնախմբի.

Օրաձգեալ վասն ներկայութեան Ս. Պատրիարքի:

Նիստ ԺԳ. Առաջարկ. Հմայեակ վարդապետի.

Յղեալ Համարակալ. դիւանին.

Նիստ ԺԴ. Հարցումներ Փափագեան էֆէնտին. Վասն Պիւտճէին, Վանօրէից խորհրդոց և Կտակաց հոգարարութեան.

Յղեալ առ Վարչութիւնն.

Նիստ ԺԵ. Առաջարկ. Պէշիբեան էֆէնտին. Վասն տարագրական գործոց Ազգ. ժողովոց.

Յղեալ առ նախաձ. դիւանն:

ՓԱԿՈՒՄ ԺՈՂՈՎ ԻՆ

Ատենապետ փաշան՝ ժողովին ներկայ տարեկան շրջանը փակեց հետեւեալ ատենարանութեամբ.

Տեա՛րք, Այս երկրորդ անգամն է՝ յորմէ հետէ յԱտենապետութիւն ժողովոյս կոչուած եմ՝ որ պատիւ ունիմ տարեկան շրջանի փակումն արտասանելու:

Բացումն և Փակումն՝ Երեսօտիսանական ժողովոց համար նշանաւոր օրեր են: Բացման օրերն՝ Ազգին պաշտօնական Գըլուխն երեսօտիսանաց կը ներկայէ օրուան վիճակն ու տարուան պէտքերը, և հրաւէր կը կարգայ գանձը հոգալու: Իսկ Փակման օրն՝ հաշուոյ օր է. տանուտէրը երեսօտիսանաց խղճին մէջ դահակալեալ՝ համար կը պահանջէ տարեկան փաստակոց, և արդիւնքը կ'արձանագրէ պատմութեան մէջ:

Անցեալ տարի՝ յետ քսաներեք նստերու՝ երբ իրարմէ պիտի բաժնուէինք, անցելոյն մէջ պարծանաց նիւթ չդանելով, ապագային վրայ յոյս և իղձ յայտնելով փակումն արտասանել պարտաւորեցայ: Իսկ այսօր կը վարանիմ թէ ի՛նչ պէտք է

ինեմ. զի յետ քսան երկար և դժուար նստերու դարձեալ մի և նոյն կէտը կը գանուինք ուր էինք ի սկիզբն տարւոյս:

Արդարև, Տեա՛րք իմ, եթէ աչքէ անցունենք մեր տարեկան աշխատութեանց շարքը, մէջը նշանակութեան արժանի գործ՝ մի միայն վերակազմութիւն վարչական ժողովոց կը գանենք, և այլ՝ ո՛չ ինչ:

Վարչութիւն մը երկու ամբողջ տարիներ իշխանութիւն վարեր է ազգին մէջ, և ի լրման շրջանին ելեր գնացեր է, մեր անոր համարը չենք կրցեր առնուլ և ո՛չ հաշիւները տեսնել:

Նոր վարչութիւն մը պաշտօնի կոչուեր է, և ահա առիկ տարին կը լրանայ, տակաւին անոր ոչ-ճէն չենք սահմաներ:

Երկրին վարչական վիճակը բարենորոգուեր, և Ազգին աշխարհվարական դիրքը փոխուեր է, և մեր մեր Ազգութեան իրաւանց երաշխաւորութիւնը Ազգային Սահմանադրութեան մէջ բնտուելու պարտաւորեալ, փոխանակ զանի մասնաւոր հոգածութեամբ ամբողջից հաստատելու, և առաջի աշխարհի նուիրական և անհրապելի ցոյց տալու, Վերաքննութեան խաղով հիմունքը խախտելու գրապեր ենք:

Եկեղեցի և Վարժարան՝ ազգային կըրօնի և լեզուի պահպանարան՝ ազգութեան այն երկու լուսատու ջահերն՝ արժանընտիր եկեղեցականաց և բնտիր վարժապետաց պակասութեամբն՝ աղօտանալու վտանգի ենթարկեալ, մեր փոխանակ նոր դպրոցներ հիմնարկելով անոնց պայծառացմանն աշխատելու, բարեբարաց Հաստատութիւններու խանդարման և կործանման անտարրեր հանդիսական գրունուեր ենք:

Տասնեւեօթ տարի է սահմանադրական վարչութիւն ունինք և պատրիարքական դիւանատան մէջ Ազգահամարի գրասենեակ, տակաւին այսօր թուրքից մէջ քանի՛ Հայ գանոււղը չդիտնալէն զատ, Կ. Պոլսոյ մէջ քանի՛ հոգի ըլլալին ճշդի չդիտենք: Եւ սակայն ազգային և քաղաքական նկատմամբ ո՛րչափ կարեւորութիւն ունի այս վիճակադրութիւնը՝ ա-

մենքնիս դիտե՛նք, բայց ո՛չ Վարչութեան ստիպած ենք այս մեծ գործը կատարել, և ո՛չ ուրիշ անօրինութեամբ մը այս մեծ պակասը լրացնելու հոգ տարած ենք:

Վերջապէս մեր Օստափառ կայսրը մեր իբր ազգ ունեցած սահմանադրութեանէն զատ, իբր քաղաքացի և Օսմանեան պետութեան մէկ նշանաւոր տարրը՝ ուրիշ ազգաց հետ համահաւասար իրաւամբ սահմանադրութիւն մը կը շնորհէ մեզ, որով ազգայնոց նոր ասպարէզ կը բացուի յառաջ քայլելու և փայլելու, որով ազգը իւր երեսօտիսանական և վարչական պաշտօններէն զատ՝ Տէրութեան պաշտօններու համար ալ մարդ հասցնելու պարտաւորութեան մէջ կը մտնէ. և մեր փոխանակ բազմաթիւ նորեր խրախուսելու և հասցնելու համար միջոցներ խորհելու, սակաւթիւ հիմներն հալածելու կ'գրադինք:

Ստոյգ է որ տարւոյս մէջ երկրին քաղաքական հանգամանքն անընդհատ սրբտատրոփ յուզմանց տեղի տալով, թոյլ չտուին մեզ անվրդով մեր պաշտօնը շարունակելու:

Ստոյգ է նաև որ տարւոյս սկիզբները՝ մեր վարչական ժողովականք՝ զոր մեր ա՛յնչափ դուրդուրալով ընտրեցինք, և վերջերը՝ մեր Սրբազան Պատրիարքը՝ զոր մեր ա՛յնչափ կը սիրենք, մեզ յաճախ միայնակ թողլով և երբեմն հրաժարականի յուսահատական ձայներ բառնալով, մեր պաշտօնին ըստ օրինի կատարման շատ դիւրութիւն չընձայեցին:

Սակայն և մեր երեսօտիսանական իրաւանց առաւել ճարտասանական և հարցանողական մասերուն նախանձախնդիր հանդիսացանք, քան թէ բարեկարգական և օրէնադրական արգասաւոր ճիւղերուն. և աւասիկ արդիւնք այս ամենայն պարագայից, ապարդիւն աշխատութեամբք փաստակարեկ և ձեռնուկայն կը ներկայանանք ի վերջ տարւոյս առաջի Ազգի և Պատմութեան:

Արդ, Տեա՛րք իմ, անցելոյն ողբը ապագային օգուտ չարտադրեր, թողուր

զայն վշտագին, և դառնանք նոր տարւոյ գարնան նոր արևն ողջունելու:

Այսօր մեր ժողովարանը կը փակուի, բայց մայիսի 8 ին նորէն պիտի բացուի: Աւխտենք այժմէն միահամուռ, առաջիկայ տարւոյ մէջ մեր երեսփոխանական պաշտօնը սրտի մտօք և ճշդութեամբ կատարել: Մաքրենք սրբենք մեր խնդրոց սոււմարէն վերաքննական, հրաժարական, հարցանողական, յարձակողական բոլոր խնդիրները, և անոնց տեղ գետեղենք կարգաւ:

1. Պէ-Տէ
2. Համարաւութիւն
3. Կրթական օրէնք
4. Վիճակագրութիւն

5. Վարչական կանոնադրութիւն ժողովոց և Խորհրդոց և Առաջնորդաց ազգիս:

Այլ ևս ներողամտութեան թուլամորթ ընթացքը մէկդի թողունք, և ազգային գործոց բարւոք տնօրինութեան ամեն խոչ և խուժ տասպակելով, անյողողղքայլենք յատաջ:

Ինչ յանձնարարութիւն որ ընենք մեր գործոց վերարեբեայ, պայմանաւ ընենք,

և պայմանաժամի լրմանը՝ խստիւ պահանջենք կորուստն կամ հրաժարում:

Բայց, Տեարք իմ, ուրիշի խստապահանջ ըլլալու իրաւունք ունենալու համար, մենք մեզ աններող ըլլալու ենք: Գօտևորինք ուրեմն, և ուխտենք դարձեալ ամենայն կանոնադրութեամբ ներկայ գտնուիլ ժողովոյս նստերուն, և մեր աշխատութեանց նախագծէն ո՛չ անդին անցնիլ, և ո՛չ ներել այլում գալ մեր խնդրոց կարգը յեզաչըջելու:

Այսպէս թերևս կրնանք բաւել մեր տարեկան անդործութեան պակասութիւնը և առաջիկայ տարւոյ համար Ազգին վստահութիւնը վայելելու իրաւունք ստանալ:

1876-77 տարւոյ Ազգային ժողովոյ նստերուն շրջանը բոլորուած է և ժողովարանը փակուած:

Յետ ընթերցման ատենարանութեան՝ ժողովը շնորհակալութիւն յայանեց Ատենապետ փառային, և ատենար գոցուեցաւ ժամը 10 ին:

ԱՏԵՆԱԴՊԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ
Գ. Յ. ՄԵԼԻՔ Ս. ԱՍԻԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Խորէն եպիսկոպոս	Մ/սիթարեան	Ա.	Ատենապետ	
2	Յակոբ վարդապետ	Փափազեան	Ա.	Ատենազ պիր	
3	Գեորգ	Աւագ ֆ.	Արծրունի	Բ.	Ատենապետ
4	Գորբիէլ	•	Չիշէքճեան		
5	Յովնանէս	•	Մկրեան		
6	Իզնատիոս	•	Մանավեան		
7	Գրիգոր	•	Սէթեան		
8	Խաչատուր	Քչնյ	Տ. Գորբիէլեան	Բ.	Ատենազ պիր
9	Արիստակէս	•	Քարակէօմբիւկի		
10	Պետրոս	•	Փափազեան		
11	Սթանաս	•	Ս. Խաչ յիւսկիւտար		
12	Մեսրոպ	•	Երէցեան		
13	Միքայէլ	•	Պալատու		
14	Զաքարիա	•	Բերայի		

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Ապրօ	Սահակ	Հֆէնտի	Ա.	Ատենապետ
2	Շահպազ	Կարապետ	•	Բ.	•
3	Նուբեան	Յովհաննէս	•	Ա.	Ատենազ պիր
4	Պոյաճեան	Յովհաննէս	•	Բ.	•
5	Նորատունկեան	Յակոբ	•		
6	Կիւլպէնկեան	Սերոփէ	•		
7	Էսայեան	Յովհաննէս	•		
8	Ազնաւորեան	Յովհաննէս	•		
9	Սաքայեան	Ալիքսան	•		
10	Մազսուտեան	Սեպուհ	•		
11	Կրճիկեան	Անդրանիկ	պէյ		
12	Մարկոսեան	Գրիգոր	Հֆէնտի		
13	Քաղազեան	Յակոբ	•		
14	Չիշէկեան	Յակոբ	•		



ՄԱՐԿԻՆՆԵՐԻ ԳԻՆԵՆԻ

ԳԻՆ ԵՐԿՈՒ ԴՐՅԻՇ ՊՂԻՆԶ



Կը ծախուի Ղարաթխա Մասիս լրաց ըղ զ բանենեակը,
Ղարաթխոյ եկեղեցւոյն բանկալը, Գարազեղի կամուրջին
զ լուխն կըրկանեան Ղուկաս աղային Պարաբան, և Կ. Պոլ-
սոյ կողմն ալ ջրալաճառ Պօղոս աղային խանութը: